

1-2(539-540)

26.01.2019

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

ԼՍՏԱՐԱՐ

Ճանաչել զիմաստությունն եւ գիրքագր, իմանալ զբանս հանճարոյ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

Ո՞՞ ԹԵ ԿԿԱՐՈՂԱՆԱՆԵ, ԱՅՆ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆԵ

Հագիվ թե աշխարհում գտնվի հայախոս մեկը, ում առնվազն ծանոթ չեն Սիլվա Կապուտիկյանի հայտնի բանաստեղծության այս խորհմաստ տողերը.

*Ու տես, որդիս, ուր էլ լինես,
Այս լուսնի տակ ուր էլ գնաս,
Թե մորդ անգամ մտքից հանես,
Քո Սայր լեզուն չմոռանաս...*

Մենք դիտավորյալ ընդգծեցինք «հայախոս»-ը, որովհետև աշխարհասփյուռ հայության մի սովոր հատվածը, ցավոք, չգիտե հայերեն գրել-կարդալ: Իսկ չիմանալ լեզուն՝ նշանակում է չճանաչել հայրենիքը: Եթե նույն այս համատեքստում մեկնաբանենք Մուշեղ Իշխանի հանրահայտ բանաձևումը՝ «Հայի լեզուն տունն է հայուն», կհանգենք մի շատ եական եզրակացության. աշխարհում մեծ թվով հայեր «տուն չունեն»:

Պարագոթսն էլ հենց այն է, որ այդ «տնանկ» կոչեցյալ հայերը մեծ ինչքի տեր են, որից երբեմն այս կամ այն չափով բաժին են հանում իրենց նախնիների կրոնայալ հայրենիքից փրկված մի նշխար-կտորի՝ Հայաստանի (Արցախի) սոցիալ-տնտեսական կարիքների համար: Հայրենիքին ամենայն կերպ օգնելը Սփյուռքում ապրող հայի համար հոգու պարտք է, և նկատենք՝ հատկապես վերջին տասնամյակներին աճել են բարեսիրական նախաձեռնությունները նույն սոցիալ-տնտեսական բնագավառներում, ինչն իսկապես խրախուսելի է:

Միևնույն ժամանակ ճշմարիտ է ասված՝ մարդ կեցցե ոչ միայն հացի: Այսօր աշխարհասփյուռ մեր յոթ միլիոն հայրենակիցների մի մասը գոնե պորտալարով կապված է նախնյաց հողին, տիրապետում է մերոպայան գրին ու խոսքին, առիթ-անառիթ այցելում է Հայաստան (Արցախ) այդ ուխտագնացության մեջ փայփայելով հայ լինելու հպարտությունն ու հայ մնալու երազանքը: Բայց կա՞, արդյոք, վստահություն, որ, ասենք, մի 50-100 տարի հետո նրանց ժառանգները կզգան Հայրենիքին կապող պորտալարի ջերմ ավիճի հոսքն իրենց ուժացվող երակների մեջ:

Հարցը հռետորական չընկալենք, այն հիմա արդեն իսկ լուրջ մտորումների առիթ է տալիս իր դժգոյն տեսլականով, այն մտահոգիչ փաստով, որ Սփյուռքում աստիճանաբար փակվում են հայկական կրթարանները: Այդպես փակվեց, գործիքանալ, Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատությունը, որն ավելի քան յոթ տասնամյակ լույսի փարոս էր տարագիր հազարավոր հայերի համար... Իսկ արտերկրի կիրակնօրյա հայկական դպրոցներում, խոստովանենք, ընդամենը տառաճանաչություն են սովորեցնում, մինչդեռ պետք է գործեն այնպիսի հաստատություններ, որտեղ հայագրի մանուկները կարողանան նաև հայաճանաչության դասեր առնել:

Քանակը որակի չի հանգեցնում: Գլեյնդելի (ԱՄՆ) հայ համայնքի թվաքանակը մասնավորապես Արցախի Հանրապետության մայրաքաղաքի բնակչությունից մոտ երկու անգամ ավել է: Ստեփանակերտում այսօր ունենք 11 հայկական դպրոց, իսկ քանի՞սն են գործում նույն Գլեյնդելում... Վաղն ավելի տխուր պատկեր է լինելու, առհասարակ, բոլոր գաղթօջախներում:

Դժվար է որևէ ղեղատուն առաջարկել, հայապահպանության խնդիրը եղել ու մնում է հայության առաջնահերթ մարտահրավերներից մեկը: Հանուն սփոփանքի գիտենք մի հնարավոր տարբերակ՝ հայրենադարձությունը, որը շարունակաբար կաղում ու կաղում է: Հայրենադարձությունը բառերով չի կայանա. պետք է Հայրենիքը գայթակղիչ դարձնել՝ բարեկեցիկ, անվտանգ, օրինահարգ ու ապահով:

Կկարողանա՞նք: Պարտավոր ենք:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Սիլվա ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՃԱՆԱՊԱՐԿԻ ԿԵՍԻՆ (հատված)



Պու պիտի ապրես այսպես, սրանով:

Շենիքի հանդում մորթված որբի տեղ՝
Աշխարհի հարսի տասնչորս որդով.
Մշո դաշտի մեջ սևցած խոփի տեղ
Քո տրակտորով, քո ծուփ-ծուփ արտով,
Մարութա վանքի մարած բոցի տեղ՝
Յոթն աշխարհի ծնող՝ քո յոթ կայանով.
Տաքի կուրցա՞ծ դարանցի տեղ՝
Բյուր ակնով նայող քո Բյուրականով:
Հայոց արցունքա՞յ «Կռունկի» տեղակ,
Սարե-սար փռված սև-սուգի՝ տեղակ՝
Հախուռն, կենսահող, սիրտը թո՛ւնդ հանող,
Հանճարիդ լույսը աշխարհի՞ն տանող
Քո սեզ Սարյանով,
Խաչատրյանով,
Պու պիտի ապրես այսպես, սրանով:

Ոխի, մոլուցքի, մշուշի դիմաց՝
Քո սիրող, փարող, երագող սրտով.
Դավի, արշավի, բիրտ ուժի դիմաց՝
Ազնիվ դաշինքի քո հին կարտով.
Օտարականի պիտակի դիմաց՝
Օտարի դատին իր կյանքով կանգնած,
Շիտա՞լ, շողոզող՞ւն քո Մանուշյանով, -

Պու պիտի ապրես այսպես, սրանով:

Պատմության երթում՝ անդուլ, հանապազ
Առաջինների շարքում՝ քայլելով.
Պատմության հանդեպ՝ երեսդ միշտ պարզ՝
Քո ողջ էությանը նորին փարվելով, -
Քո մաքառելով,
Քո հավատալով, -
Պու, ի՞նչ ժողովուրդ, դու ապրել ես, կա՞ս,
Այսպես ապրելով...

Թող որ օրերս՝ իմ ճամփակեսին
Ծանրանան այսպես խոհով ու խոկով,
Թող որ ալիքվի՛ իմ ողորկ հոգին
Քո անցյալ ցավով, քո դժվար բախտով.
Ու վարդագույնին քո երևանյան
Մերթ ստվե՛ր ընկնի՛ քո Արարատից.
Արև օրերիս անձրև՝ կաթիլի,
Ծիածանիս մեջ ամպերը մնա՛ն, -
Պու՛ աներջանիկ, բայց մեծ սիրո պես,
Հոգուս պարապը ավիտ-ափ լցնող,
Պու ուրախ ժամիս՝ մորսն՝ ք մշտակեզ,
Պու տխուր ժամիս՝ բերկրա՛նք մշտաշող,
Ինձ հարստացնող, ինձ ակնվազնող
Եվ ինձ հաստատող դու միա՛լ իմ «ես», -
Եթե լցված եմ՝ լցված եմ քեզնով:

Թող որ փոխարեն գոռ մի անցյալի՝
Թագով ու թախտով, գորով ու զորքով,
Պու թողել ես ինձ՝ այրո՞ղ, բորբոքո՞ղ -
Հայոց պատմությունն աղետներով լի, -
Բայց դրա դիմաց ինձ տվել ես դու
Քո վերապրումի բերկրանքն անսպառ.
Բերկրանքն՝ ամեն մի նոր քարից համար
Կրկնակի՛ խնդրով ուրախանալու.
Բերկրանքն՝ աշխարհը զգալու խորքի՞ց
Եվ հասկանալու ամեն ինչ՝ խորունկ,

ժիր մանուկիդ մեջ՝ բացի մանուկից
Տեսնելու կյանքդ հավերժող խորհուրդ.
Պարզ կոնյակիդ մեջ՝ հողերին ուրիշ
Հողիդ կորովը համբավող ավի՛շ,
Չեթեղմունի մեջ՝ այլազգի հյուրիդ՝
Եղբայրության տոն ու խորհրդանի՛շ, -
Պու՛՝ եղբայրության սեղանի կողքին
Դարիդ նոր խոսքը քո լեզվով ասող,
Դարիդ նոր բախտը քո բախտով կիսող,
Քո Արագածից՝ հրթիռ ու երկինք
Սև, բիբլիական քո աչքով տեսնող,
Դարեր չհոգանած, որոնո՞ղ հոգի, -
Ես՝ ժառանգո՞րդը քո երգ ու վերջի,
Եթե հպարտ եմ, հպարտ եմ քեզնով:

Հպարտ եմ, որ դու քարտեզի վրա
Քո արյունով ես մերված կարմիրին,
Որ զավակներիդ վերջին ընտրանին
Մի վերջին անգամ գոհեցիր նրա՞ն, -
Որ արյուն տալով, արյուն առնելով
Նորոգվում ես դու՛ խառնված նորին.
Թե զորանում է ուրիշը տարով,
Պու գորանում ես ժամով, օր-օրից.
Այդպես մահվան դուռն հասած ու դարձած
Տկար կազմվածքն է բուռն ապաքինվում, -
Պու՛՝ հազար ծեռքով ապրելուն կառչած,
Հազար տեղերից կյանքով ես լցվում.
Ո՛չ, չե՛մ հավատում, այս երկնքի տակ
Քո հին երակին չկա՛ սպառում, -
Ես՝ բարակ մի թել հյուսվածքում քո տաք,
Եթե ապրում եմ, քեզնով եմ ապրում...

Քեզնով եմ ապրում.
Եվ ես՝ բանաստեղծ,
Օրհնո՞ւն եմ բախտս հետին այս երգով,
Որ աշարհի մեջ, երկնքի ներքո
Աշխարհը թողա՞ծ ծնվել եմ այստեղ
Ու որդի՞ն եմ քո...

ՔՆԱՐԵՐԳՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՐԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

Հունվարի 20-ին լրացավ ակադեմիկոս Կապուտիկյանի ծննդյան 100-ամյակը: Արցախի գրողների միությունը կազմակերպեց հոբելյանական միջոցառում «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Լուրվիկյան Հակոբ Այնթապյանների անվան արևմտահայերենի և հայագիտության գիտահետազոտական կենտրոնում: Այն բացեց ԳՄ նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը, որի գնահատմամբ՝ դեռևս կենդանության օրոք Ս. Կապուտիկյանը դասական էր և իր գրական վաստակով նոր ժրբացեց հայ գրականության մեջ: Մեր գրական մեծերից հետո անցյալ դարի 50-60-ական թթ. ասպարեզ եկավ մի նոր տաղանդաշատ սերունդ՝ Շիրազ, Սիլվա Կապուտիկյան, Համո Սահյան, Պարույր Սևակ, Վահագն Դավթյան, Գևորգ Էմին և այլք, որը նոր լույս, նոր ձայն, նոր մտեցումներ բերեց մեր գրականության մեջ և հսկայական քայլով առաջ մղեց այն: Ս. Կապուտիկյանն այն գրողն է, որը միավորեց եղբունցի հետո աշխարհով մեկ սփռված հայությանը, ընդգծեց բանաստեղծության իմաստը, Նա գրողներից միակն էր, որը ճամփորդել է աշխարհի բոլոր ծագերում, որտեղ հայ կա: Եվ այդ շփումներից ծնվել են նա «Խճանկար հոգու և քարտեզի գույներից», «Քարավանների դեռ քայլում են» արձակ գործերը: Բայց Ս. Կապուտիկյանն առաջին հերթին բանաստեղծուհի է: Դեռևս 24 տարեկանում նրա գրած «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը միանգամից բարձրացրեց նրա անունը, հնչեցրեց աշխարհով մեկ: Դա չարենցյան իտլորինակ «Պատգամ» է, որտեղ եղիմակը բարձրացնում է մեր ազգային խնդիրը, մի հարց, որ դժվար

էր այդ տարիներին շարժել: Ամբողջ աշխարհի հայությունն այն կարծես իր հիմնը դարձրեց, որովհետև ուժացան խնդիրը մինչև հիմա մնում է, նշեց Վ. Հակոբյանը: Ս. Կապուտիկյանն առաջին հայ բանաստեղծուհին է, որ արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի: Նրա 20-ից ավելի ժողովածուներ հրատարակվել են ռուսերեն, և այսօր էլ ռուս իրականության մեջ նրա անունը հնչում է ռուս մեծ բանաստեղծների կողքին: ԳՄ նախագահը հուշեր ներկայացրեց Ս. Կապուտիկյանի հետ ունեցած հանդիպումների, ինչպես նաև կարևորեց այսօր մայր Հայաստանի ղեկավարության կողմից ինչպես Ս. Կապուտիկյանի, այնպես էլ մեր մյուս գրական մեծությունների արժևորումը:

Ասպարեզն այնուհետև տրամադրվեց Արցախի գրական աշխարհի ներկայացուցիչներին, որոնք ելույթներ ունեցան Ս. Կապուտիկյանի ստեղծագործությունների թեմատիկայով:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանն անդրադարձավ Արցախի հետ Ս. Կապուտիկյանի կապին: 1960-ական թթ., այցելելով Արցախ, բանաստեղծուհին ակնարկ էր գրել ճարտարի կոլտնտեսության մասին, գրել «Ղարաբաղի բարբառ»-ը բանաստեղծությունը: Գրականագետի վկայությամբ՝ 1989թ. այցի մի հանդիպման ժամանակ բանաստեղծուհին ասել է, որ «Հայոց բարդին» Արցախի մասին է: Ս. Կապուտիկյանի հայրենասիրական բոլոր բանաստեղծություններում համահայկական ցավն են զգում, համահայկական ձգտումները: «Արցախը դարձել է մեր ժողովրդի միասնության խորհրդանիշը: Այո, մենք եռամիասնություն ենք, և դա ժամանակին տեսել է Կապուտիկյանն

իր պոեզիայում ու արձակում», - նշեց բանաստեղծը:

«Գրիգոր Նարեկացի» համալսարանի գիտահետազոտական կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների թեմաժուկ Աննյա Գրիգորյանը ներկայացրեց կնոջ կերպարը Կապուտիկյանի սիրելի կողմը մեջ: Նշեց, որ նրա պոեզիան հետաքրքրական է կանացի հոգու ենթաշերտերը բացելու, սիրելու և տանջվելու հոգեբանական վերծանման ու բացահայտման առումով: Կապուտիկյանի սիրերգության առաջնքը սիրող, չհասկացված, սիրո տառապանքները կրող կնոջ հոգեկան ապրումների, զգացումների, հույզերի, ցանկությունների ինքնարտահայտումն է՝ գերծ սեթևեթանքների, կեղծ ելեջերից:

Գրողին նաև որպես մանկագիր ներկայացրեց բանաստեղծ, մանկավարժական գիտությունների թեմաժուկ Արևալի Թովմասյանը:

Բանաստեղծ, «Հայրենյաց պաշտպան» թերթի խմբագիր Ռոբերտ Եսայանի բնութագրմամբ՝ Կապուտիկյանի կյանքն անմնացորդ նվիրում է հողին, մայրենի լեզվին, եկեղեցուն ու խաչքարին, հայ ակունքին, ոգու ասպետներին, ազատության զինվորներին: Նրա բնորոշմամբ՝ «Ղարաբաղի բարբառ»-ը եռացող հրաբուխ է, որը կանխանշում էր ներքին խռովքն ու ապստամբությունները: Համառ, կարծր, չնդկված, կոշտ բառերով ընդգծել է դարաբաղնու հզորությունը: Հողում խրված ժայռի պես են դարաբաղնու ու նրա բարբառը, նրան կոտորում են՝ ինչպես ժայռը. չի պոկի նրան ոչ մի հարված: Մրանով նա մղում է դարաբաղնուն եռապատկելու իր սերն ու ուժը՝ դիմակայելու ապագա հարվածներին:

Սեյր հիշում ենք նրա մոսկովյան գրույցները ԽՄԿԿ ղեկավարների հետ, ռուս մտավորականության հետ կապը, որն ավելի ճանաչելի դարձրեց դարաբաղնու խնդիրը: Նա ոգեշնչում էր ժողովրդին իր ելույթներով:

Ս. Կապուտիկյանի արձակ գործերին անդրադարձավ «Ստեփանակերտ» թերթի խմբագիր, արձակագիր Սոֆյա Սարգսյանը:

Միջոցառմանը ցուցադրվեց տեսաֆիլմ Ս. Կապուտիկյանի մասին: ԼԳԴ ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանը կարդաց բանաստեղծուհու ստեղծագործություններից:

Սեփ. լրատվություն

ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐԿԱՎՈՐ Է ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄ



ԼԴԴ ԿԳՍԼ գնահատման և թեստավորման կենտրոնի անփոփոխելի և հանրակրթական դպրոցներում 1-ին կիսամյակում անցկացրած արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները: Այդ և հարակից հարցերի շուրջ է մեր հարցազրույցը ԳՆԱՀԱՏՄԱՆ և թեստավորման կենտրոնի տնօրեն Յուրի ԲԱՐՍՅԱՆԻ հետ:

Պարոն Բարսեղյան, ամեն անգամ ընթացիկ գնահատում իրականացնելիս որևէ նորույթ եք մտցնում: Ո՞րն է այս անգամվա նորույթը:

Ընթացիկ արտաքին գնահատումն այս անգամ փոքր-ինչ այլ կարգով անցկացրինք. նախկինում դասարանները բաժանվում էին ըստ կիսամյակների: 4-րդ, 6-րդ, 8-րդ և 11-րդ դասարաններում անցկացվում էր 1-ին կիսամյակում, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններում՝ 2-րդ: Հիմա նշված բոլոր դասարաններում (տարբեր դպրոցներում՝ տարբեր դասարաններում) անցկացվել է 1-ին կիսամյակում: 2-րդ կիսամյակում դարձյալ բոլոր դասարաններում կանցկացվի, բայց դպրոցներում առաջին կիսամյակի դասարանները չեն կրկնվի:

Մեկ կիսամյակում բոլոր դասարաններում անցկացված նպատակն այն էր, որ դրանից անմիջապես հետո թեստերը տեղադրվեն նախարարության կայքում, և ուսուցիչներն աշակերտներին նախապատրաստեն կիսամյակային գրավոր աշխատանքներին: Այսինքն՝ դա էլ յուրատեսակ օգնություն է նրանց: Մեկ այլ նորույթ լինելու է 2-րդ կիսամյակում. արտաքին գնահատման համար ընդգրկվելու է ոչ թե սեպտեմբերի 1-ից մինչև մարտի 20-ը ուսումնական նյութը, ինչպես միշտ արվում էր, այլ հունվարի 1-ից մինչև մարտի 20-ը, այսինքն՝ միայն 2-րդ կիսամյակի նյութը, ինչ ծավալով որ առաջին կիսամյակում է: Որպեսզի բոլոր աշակերտներն ստուգվեն հավասար պայմաններում:

Եվ անկ նորույթ. նախկինում գրավոր աշխատանքները չէինք ուղարկում դպրոցներ. տալիս էինք նրանց, ովքեր հետաքրքրվում էին, իսկ հիմա անխտիր դրանք ար-

յունքների հետ վերադարձնում ենք բոլորին, որպեսզի դասարաններում վերլուծվեն, աշակերտն իմանա՝ որտեղ է ինքը սխալվել:

- Բողոքներ եղե՞լ են սխալ գնահատման կամ ինչ-որ այլ հարցերի շուրջ և ընդհանրապես՝ թերություններ եղե՞լ են:

- Հիմա ոչ մեկը չի բողոքում, որ սխալ է ստուգված, քանի որ գնահատումն իրականացվում է ըստ պետական չափորոշիչների: Տնօրեններն էլ են հասկացել, որ դա իրենց ներքին աշխատանքի համար է: Հիմա ավելի զգաստ են: Կասկածելի արդյունքներով գրավորները մեծ հարցական նշանով ուղարկում ենք դպրոց:

237 ուսումնական հաստատություններում (մասնաճյուղերի հետ) 893 դասարաններում գնահատվել է 7186 աշակերտ: Ըստ նախատեսվածի պետք է գնահատվեր 7997 աշակերտ: 811-ը՝ մոտ 10 տոկոսը, բացակայել է: Դա բավարարի սահմանում է, թեպետ դրանց մեջ քիչ չեն նրանք, ովքեր ուսուցչի հրահանգով են բացակայել: Ներառական կրթության երեխային շատ ժամանակ չեն թույլատրում մասնակցել: Բայց ինչո՞ւ: Թող մասնակցի, այդպիսի երեխաները մեզ մոտ հաշվառված են. եթե նրանք ստանում են 1-3 միավոր, մենք չենք գնահատում, բայց եթե ստանում են «4» և բարձր, ինչո՞ւ չգնահատենք: Դա են թերություն են համարում:

Ինչպես միշտ, կազմակերպչական աշխատանքները դրվել են ուսումնական հաստատությունների վրա, և ինչպես միշտ, բոլոր անհրաժեշտ նյութերը՝ ցուցակ-արձանագրությունները, աշխատակարգը, թեստերով ծրարները, մեկուկես ամիս առաջ ուղարկվել են դպրոցներ:

- Մարդկային գործունը դեր չի՞ խաղում ...

- Տեխնիկական դժվարություն է թեստերը նույն օրը գյուղեր հասցնելը, դրա համար էլ նախօրոք ենք ուղարկում: Իմ մտածելակերպն այսպիսին է. եթե պետությունը երեխաների ուսուցումն ու դաստիարակությունը՝ շատ կարևոր գործ, վստահում է դպրոցի տնօրենին, որը պետության ներկայացուցիչն է այնտեղ, ինչպես և նրան չվստահեն մի ծրար թեստերով: Կարգի խախտում հիմնականում չենք արձանագրել: 200 դասարաններում մոտ 40 դպրոցում 3800 աշակերտի գրավոր աշխատանքին (մասնակիցների կեսից ավելին) ներկա են եղել ԳԹԿ աշխատողները:

- Իսկ հիմա՞ արդյունքների մասին:

- Արտաքին ստուգում իրականացվում է 2010-2011 ուսումնական տարվանից: Բոլոր տարիների վեր-

լուծությունները պահում են: Իսկ դրանք կատարվել է տարբեր կերպ՝ ըստ տարիների, դասարանների, դպրոցների, առարկաների և այլն: Այս տարի, ի տարբերություն նախորդ անգամվա, 4-րդից մինչև 8-րդ դասարաններն առարկաներն ընտրել է ԳԹԿ-ն այն հաշվով, որ տվյալ դասարանում նախորդ տարվա գնահատված առարկան չկրկնվի: Իսկ 10-րդ և 11-րդ դասարաններում 2-րդ կիսամյակում առարկան ընտրել է աշակերտը՝ ըստ իր նախասիրության: Նպատակն է՝ պարզել ԳԹԿ-ի և աշակերտի կողմից ընտրված առարկաների արդյունքների տարբերությունը: Ուշագրավ փաստեր են արձանագրվել: Տոկոսային հարաբերությամբ արդյունքները պահպանվում են ըստ տարիների: Այսպես, 1-3 միավորը կազմում է մոտ 24%, 4-6 միավորը՝ 45%, 7-8-ը՝ 26-27%: Դա նշանակում է, որ մեր դպրոցներում վիճակն այն միջակայքում է, որը ոչ դեպի դրական է, ոչ դեպի բացասականը:

- Ինչպե՞ս կգնահատեիք մակարդակը:

- Ոչ բացասական: Բացասական չեն կարող ասել, որովհետև մենք ունենք շատ լավ դասարաններ: Բայց դասարաններ էլ կան, որ շատ թույլ են: Դա տարրական դպրոցից է գալիս: Այդտեղ բաժանումը սխալ են կատարում. դասարան կա, որ ինչ առարկայից էլ գրավոր տաս, մեծ մասը 1-3 միավոր է ստանում: Դասարան էլ կա, որ բոլորը 7-10 միավոր են ստանում: Այդ երևույթը հիմնականում մայրաքաղաքում է:

10-րդ և 11-րդ դասարաններում արդյունքներն ավելի բարձր պետք է լինեին, քանի որ, ինչպես ասացի, առարկաներն աշակերտներն են ընտրում, որից ավելի լավ են, բայց արդյունքների մեջ տարբերություն չկա:

Ես միշտ ասում եմ, որ 10-րդ դասարան մտնելուց աշակերտը պետք է արդեն իմանա՝ ինչ մասնագիտություն է ընտրելու և մասնագիտական առարկաներ ուսումնասիրի: Եթե արհեստագործական, միջին մասնագիտական հաստատություններ ընտրած աշակերտները մասնագիտություն են սովորում, ավագ դպրոցի աշակերտն էլ իր մասնագիտական առարկաները պետք է խորացված ուսումնասիրի: Բայց չի ստացվում: Եթե խմբային ձևով դասն անցկացվի, ավելի արդյունավետ կլինի: Կարող է դասարանում նույն առարկայից տարբեր տևողության դաս լինի: Փոքր դպրոցներում չպետք է լինեն 10-12-րդ դասարաններ: Դպրոցների կենտրոնացում պետք է լինի:

- Այդպիսի առաջարկություն էլի է արվել, մտավախություն կա, որ գյուղը կարող է դատարկվել:

- Անտեղի մտահոգություն է: Այդ հիմա է դատարկվում գյուղը: Ծնողը տեսնում է, որ քաղաքում ավելի որակյալ կրթություն կարող է ստանալ իր երեխան, և նրան ուղարկում է, հետո էլ ընտանիքն է տեղափոխվում: Մենք պետք է ենթաշրջանային մեծ դպրոցներ ստեղծենք, որպեսզի երեխան չհասնի Ստեփանակերտ կամ շրջկենտրոն, մնա իր գյուղում, սովորի բարձր կարգի դպրոցում. որտեղ կհավաքագրվեն լավագույն մասնագետներ. պարտադիր չէ, որ նա լինի տվյալ գյուղի ուսուցիչը: Աշակերտների և ուսուցիչների տեղափոխումն իրականացվի պետական միջոցներով: Մտածենք՝ մեզ ինչ է պետք. դպրոցը սոցիալական խնդիրներ լուծի՞, մեկ աշակերտով ավագ դպրոց պահի՞, թե՞ ուսումնառ: Կատարել են վերլուծություն ըստ դասարանների, և ի՞նչ է պարզվել: Հիմնական դպրոցում 1-3 միավորը կազմում է 23%, 11-րդ դասարանում՝ էլի 23%: Բայց այդպես չպետք է լինի, չէ՞: 11-րդում աշակերտն ընտրում է այն առարկան, որն ինքն ավելի լավ է իմանում, որն իր հետագա մասնագիտության համար պետք է: Բայց ոչ մի տարբերություն չկա: Նշանակում է՝ ավագ դպրոցը չի աշխատում: Եթե հիշում եք, մի ժամանակ ես ասում էի, որ ավագ դպրոցի արդյունքները մոտ 10 տոկոսով բարձր են միջնակարգի արդյունքներից: Հիմա չկա այդ տարբերությունը: Եվ դա նաև միասնական քննություններն են ցույց տալիս: Ավագ դպրոցի միջին մակարդակն ավելի բարձր չէ (խոսքը լավագույն աշակերտների մասին չէ), քան միջնակարգին: Հարկ է ուսուցման ձևը փոխել:

Մինչև հիմա ուսումնական պլաններում գրված է, որ ուսուցման հիմնական միջոցը դասն է: Մինչև դա չփոխվի, եական փոփոխություններ չեն արձանագրվի: Հայաստանում մասնավոր դպրոցներն առանձին ծրագրեր ունեն, որոշ տեղերում դաս-դասարանային համակարգին փոխարինել է խմբային ուսուցումը: Փոքրակազմ դպրոցում դա չի ստացվում: Ես չեմ կարող հասկանալ, երբ ասում են՝ ինչպես կազմակերպել գյուղական դպրոցների երեխաների տեղափոխումը: Եթե արհեստագործական կամ միջին մասնագիտական հաստատություններում սովորողները կարող են մի վայրից մյուսը գնալ, 10-12-րդ դասարանների աշակերտները չէ՞ն կարող ենթաշրջանի ավելի մեծ դպրոց հաճախել. չէ՞ որ նրանք նույն տարիքի են: Այո, կարող է դեպքեր լինեն, երբ գյուղի աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ, իրոք, դժվար է փոխադրումն իրականացնել: Բայց առնվազն 80%-ի դեպքում հնարավոր է այդպիսի կենտրոններ

ստեղծել, հավաքագրել լավագույն մասնագետների: Եթե նորմալ ուսումնական հաստատություններ ունենանք, որտեղ ավագ դպրոցը աշխատի հավուր պատշաճի, համալսարանն էլ նորմալ կլինի, այստեղից էլ՝ մասնագետները: Եղած կարծրատիպը պետք է մի օր կոտրել: 12-րդ դասարան պետք է գնա աշակերտների 30%-ը և ոչ թե գրեթե բոլորը, որոնք հետո պետք է գնան բուհ:

Օպտիմալացում ասելով շատերը հասկանում են, թե դա նաև հիմնական դպրոցին է վերաբերում: Ոչ, հիմնականը պետք է մնա, բայց ավագը պետք է այլ կերպ լինի: Եթե ուզում ենք, որ ավագ դպրոցն այդպիսին լինի, միջին մասնագիտական և արհեստագործական ցանցը պետք է ընդլայնվի: Ծախսատար է, բայց հնարավոր է անել:

- Պարոն Բարսեղյան, ըստ Ձեզ, դպրոցները սիրո՞վ են վերաբերվում ԳԹԿ-ին՝ որպես ստուգող, օգնող, օժանդակող կառույցի:

- Տնօրենները՝ այո, որոշ ուսուցիչներ՝ ոչ: Վերջիններս չեն ուզում իրենց արդյունքները ցույց տալ: Հաճախ ասում են՝ երեխաները հակում չունեն ուսման նկատմամբ, ծրագիրն է բարդ, դասագիրքը՝ վատ, խնդիրը տեսնում են իրենցից դուրս: Այդպիսի մարդիկ սիրում են հանգիստ ապրել, իրենց ոչ մեկը չմոտենա, ոչինչ չասի, իրենք էլ այդպես շարունակվեն չերևալ: Բայց լավ ուսուցիչները ցանկանում են արտաքին գնահատում լինի, որ իրենց արդյունքը երևա:

- Գիտե՞ք, որ ամեն անգամ արտաքին ընթացիկ գնահատում անցկացնելուց հետո վերլուծություն եք կատարում և առաջարկությունների հետ միասին ներկայացնում նախարարություն: Ի՞նչ ընթացք են ստանում դրանք:

- Հենց այնպես, ձևական առաջարկություններ չեն ներկայացնում: Շատ մեծ սկզբունքային հարցեր չեն դնում, առաջարկում են այն, ինչը հնարավոր է իրականացնել, ինչը մեզանից է կախված: Ես ոչ մի անգամ չեմ ասում ծրագիրը, չափորոշիչները փոխենք, քանի որ դրանք մենք չենք անում, այլ Հայաստանը: Ես այն կարծիքն եմ, որ այն խնդիր պետք է դնես, որի լուծումը գիտես: Իսկ եթե չգիտես լուծումը, մի առաջարկիր:

Ինչ որ ասում են՝ պետք է համալիր լուծվի. և՛ կատարության որոշում լինի, և՛ աշխատաշուկա ստեղծվի, աշխատաշուկայում էլ տարբերվի՝ ով ինչով է զբաղված: Պետական մտածելակերպ պետք է ունենալ, որ պետությունը առաջ գնեն: Հույս ունեն, որ ամեն ինչ լավ կլինի:

Հարցազրույցը՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

ԳԹԿ-Ն ՍԿՍԵԼ Է ԲՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒ

Արցախի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնը սույն թվականի հունվարի 22-ից սկսում է միջնակարգ հանրակրթական ծրագրի իրականացնող հաստատությունների (անկախ կազմակերպատկական ձևից) շրջանավարտների «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Օտար լեզու» (ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն), «Ստեղծագործական աշխատանք» (շարադրություն) առարկաներից միասնական և կենտրոնացված (2019թ. բուհերի ընդունելության), «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն» առարկաներից պետական ավարտական քննությունների կազմակերպման գործընթացը:

տը լրացնում են իրենց ուսումնական հաստատություններում, նախորդ տարիների շրջանավարտները, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտները՝ ԱՀ գնահատման և թեստավորման կենտրոնում (հասցեն՝ ք. Ստեփանակերտ, Մարտունի 97): Միասնական և կենտրոնացված քննություններին մասնակցելու համար անհրաժեշտ է՝

- 3x4 չափսի լուսանկար,
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- ԱՀ ֆինանսների նախարարությունում Գնահատման և թեստավորման կենտրոնի 915013000145 հաշվի համարին յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար փոխանցել 1500 (հազար հինգ հարյուր) դրամ և վճարի անդորրագիրը կցել դիմում-հայտին:

Միասնական և կենտրոնացված քննությունների վճարից ազատվում են հետևյալ դիմողները՝

- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները,

- ՀՀ և ԱՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին կցում են համապատասխան փաստաթղթի պատճենը: 12-րդ դասարանների աշակերտները պետական ավարտական քննություններին հայտագրվում են իրենց ուսումնական հաստատություններում:

Դիմում-հայտերի ընդունման և պետական ավարտական քննությունների հայտագրման վերջին ժամկետը **2019թ. փետրվարի 22-ն է:** Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (047) 97- 40 - 51 հեռախոսահամարով:

«Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

31 ՏԱՐԻ ԱՌԱՋ

1989-Ի ՀՈՒՆՎԱՐԸ (իմ օրագրից)

2018թ. դեկտեմբերի 31-ին միջնեկ աղջկան՝ Մարգարիտայի ընտանիքի հրավերով Նոր տարին դիմավորեցինք Արցախի (ոչ միայն) պարծանք բերողաբար Շուշիում, այն էլ՝ Ավան հարյուրամյակի անունը հավերժացնող 12-հարկանի հյուրանոցի ռեստորանում: Մինչև Շուշի հասնելը ավագ աղջկան՝ Մարիետայի խնդրանքով եղանք մայրաքաղաքում: Երեկոյան ժամին էր: Քաղաքը պարուրված էր էլեկտրական բազմազան բոցկլտացող լույսերի մեջ և դրախտային տեսք ուներ: Հիացած եմ մեր ժողովրդի այսօրվա կյանքով: Ի՞նչ եռուզեռ եմ տեսնում Արցախ աշխարհում: Մարդիկ ժրջան մեղուների պես ամեն ինչով հոգում են Ամանորը պատշաճ կերպով տոնելու: Ամենուրեք առատություն է, հեքիաթային առատություն, որը մեր նվաճած անկախության ու ազատության արգասիքներից մեկն է, չնայած «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակում ենք: Քաղաքի բազմահարկ տների պատշաճաբերում ու բակերում էլեկտրական լույսի հետ խառնվել են խորովածի համար բոցկլտացող խարույկները: ամեն տեղ աշխուժություն, ժպիտ ու ծիծաղ, երգ-երաժշտություն: Այսքանը դիտելով՝ հրճվածի գիրկն էի ընկել, վերացել ամեն ինչից և մտքով վերադարձել 1988թ. դեկտեմբերի 31-ը: Այս օրը մենք դեռ դաժան երկրաշարժից ուշքի չէինք եկել, չէինք էլ հիշում, ավելի ճիշտ, չէինք էլ գգում, որ տարին ավարտվում է, որ այն շուտով իր լիազորությունները կհանձնի մեր տարվան՝ 1989-ին... Քաղաքում աղքատություն էր տիրում, այո, աղքատություն՝ բառիս լիակատար իմաստով: դատարկ խանութներ ու կրպակներ էին, որոնց մոտ մինչև այդ հերթեր էին օրվա հաց կամ ինչ-որ մթերք ձեռք բերելու համար, հերթեր էին նաև մսի ու կարագի համար, որ քաղաքի բնակչությունը յուրաքանչյուր ամիս ստանում էր կտրոններով, ասել է թե՛ քաղաքի բնակչությունը որոշ չափով մտով ապահովված էր, բայց, ցավոք, շրջապատումս խորովածի համար ոչ մի խարույկ չտեսա, չնայած ավանդական խոտք էր. «Նոր տարին ինչպես դիմավորես, այնպես էլ ամբողջ տարին կլինի»: Կարծես այդ մեզ չէր վերաբերում... Խոր ցավի մեջ էինք...

Ինչևէ, ուշ երեկոյան բերդաքաղաքում էինք, որտեղից Ստեփանակերտն ավելի գեղեցիկ էր երևում ու հիշեցնում «Իմ սիրուն քաղաք, իմ գարուն քաղաք» Նաիրուհի Ալավերդյանի երգի հնչյունները, որ մեծ սիրով լսում էինք: Ստեփանակերտի մոտացել էի, որ Ամանորը դիմավորելու էի եկել: Շուրջս նայելով՝ հանգիստ շունչ էի քաշում, ամեն տեղից հայկական հոտ է փչում... Բարձրանում եմ հյուրանոցի հարկերից մեկի պատշաճաբեր, կրկին նայում մայրաքաղաքին, որ կարծես լույսի, աստղերի ծով թե օվկիանոս լինի, անցնում եմ մյուս պատշաճաբեր, նայում շուրջս, ուրախանում, որ Շուշիում ևս բոցկլտում են էլեկտրական լույսերը, բայց սրտի ցավ գգում, որ լուսավորված փողոցների երկու կողմերի բազմահարկ շենքերից հատուկ ենտ պատուհաններից է լույս երևում, որը հուշում է այն մասին, որ բազմաթիվ բնակարաններ սպասում են լույսը վառողների...

Ստածում եմ. մեր ժողովուրդն ինչպիսի՞ դաժանություններ է ապրել ու դիմացել: Վերհիշում եմ դասավանդման տարիներս, երբ սաներիս գիտակցությանն էի հասցնում, որ ժամանակին Շուշին ավելի շատ բնակչություն է ունեցել, քան Երևանը, նույնիսկ՝ Բաքուն: Հիշում եմ բնակչության թիվը. 1916թ. քաղաքն ուներ 43,5 հազ. բնակիչ, որից 21,5 հազարը հայեր էին: Առաջին թուրքը Շուշի է մտել 18-րդ դարում, որքան հիշում եմ՝ 1750-

ական թվականներին. ինչպե՞ս շուտ բազմացավ և Փանահ խանի գլխավորությամբ անտեղների պես բազմացող այդ քոչվոր ցեղը կեսդարյա կռիվներ մղեց, բայց հային հպատակեցնել չկարողացավ: Դրանից հետո Շուշին դարձավ հայ ժողովրդի փառքն ու հպարտությունը, սակայն 1920թ. այն դարձավ հայ ժողովրդի հետ մուսավաթական հրոսակախմբերի դաժան պատերազմների թատերաբեմ: Արցախը համառորեն պաշտպանվեց, դիմադրեց, չհպատակվեց մուսավաթին, միայն 6 հազ. հայերի հաջողվեց մազապուրծ փրկվել, մնացածը մորթվեց և ողջ-ողջ այրվեց: Խորհրդային կարգեր Շուշիում հաստատվեցին միայն 5 հազ. բնակչությամբ, սակայն այդ մոր կարգերի ժամանակ Շուշին ադրբեջանականացվեց. այստեղ հայերի կողքին 10 հազարից ավելի ադրբեջանցի սկսեց ապրել, որը հասցրեց նրան, որ 1988-ին Շուշին կրկին հայաթափվեց և դարձավ Բաքվի հիմնական կրակակետը, որով ամեն ինչի դիմեց՝ արցախահայությանը հնազանդեցնելու կամ լրիվ ոչնչացնելու: Բայց, փառք Աստծո, նրանց չհաջողվեց. հայ ժողովուրդը մի բռունցք դարձավ՝ ջարդեց ու Շուշից ընդմիջտ դուրս քշեց մինչև ատամները զինված թուրք-ադրբեջանցուն, և այսօր ազատագրված Շուշին կրկին իր հայկական զգեստն է հագել, կրկին հայկական մշակույթի կենտրոն է դառնում, ստվարանում է նրա բնակչությունը, և հեռու չէ այն ժամանակներ, երբ բոլոր բնակարաններում Ստեփանակերտի պես էլեկտրական լույսը կիշխի:

Ինչպես վերևում նշեցի, 88-ի դեկտեմբերին խոր ցավի մեջ էինք, դեռ ուշքի չէինք եկել դաժան երկրաշարժից, բայց ինչ արած, կյանքը շարունակվում էր, մեր սկսած Շարժումը, չնայած մի պահ կանգ առավ, բայց չմարեց, շարունակվեց, թեկուզ լռակյաց էր թվում: Մեր Շարժումը Կրեմլին հանգիստ չէր տալիս, որն ամեն ինչի դիմում էր՝ ելք գտնելու, ինչ-որ ձևով այն դադարեցնելու կամ կանխելու, բայց դարաբաղու համառությունը և անկախության ու ազատության համար բարձրացրած Շարժումը քանի գնում, ավելի էր թափ առնում:

Եվ այսպես, 1989թ. հունվարի 10-ին ցավով իմացանք, որ «Ղարաբաղ» կոմիտեի մի շարք անդամների հունվարի 9-ին կալանավորել և տեղափոխել են Մոսկվա: Դրությունը դարձյալ շիկացավ... (Շարունակվում են ընթերցել օրագրիցս):

12.01.1989թ.: Երեկ, հունվարի 11-ին ՍՍՀՄ ԳԽ նախագահությունը լսել է մեր հարցը և որոշել Սահմանադրության 119-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կառավարման հատուկ ձև սահմանել, մարզի իշխանությունը հանձնել Հատուկ կառավարման կոմիտեին, որի նախագահ է նշանակվում մեզ բոլորիս քաջ ծանոթ, ՍՍՀՄ ԿԿ բաժնի վարիչ Արկադի Վոլսկին: Չգիտեմ ինչու, այդ մոր մարմնի ստեղծումն ինձ հիշեցրեց 1917թ. Ռուսաստանի ժամանակավոր կառավարության կողմից ստեղծված Անդրկովկասյան հատուկ կոմիտեն (ՕՅԱԿՕՄ)՝ Մի՞թե պատմության անիվը հետ է տրվում: Մարզում հատուկ կառավարման ձև մտցվելով՝ դադարեցվում է մեզ մոտ գործող սովետական, արհմիութենական, կոմերիտական և կուսակցական բոլոր կազմակերպությունների գործունեությունը: Սակարծես թե յուրովի պետական հեղաշրջում է, այն էլ՝ վերակց, որի հետևանքով մեր մարզի ղեկավարությունը զրկվում է զանգվածների հետ աշխատելու իրավունքից:

Մարզում Հատուկ կառավարման կարգ մտցնելն ստիպեց ինձ վերհիշել 1988թ.

փետրվարից սկսած՝ մեր Շարժման վերելք ապրող ընթացքը և Կրեմլի կողմից միջոցների դիմած քայլերը: Փետրվարի 20-ի՝ արցախահայության պատմական որոշմանը փետրվարի 21-ին հաջորդեց ՍՍՀՄ ԿԿ-ի որոշումը. այն մի խումբ ծայրահեղականների ձեռքի գործ որակվեց, և Ստեփանակերտ ուղարկվեցին Ռազունովսկին և Դեմիչևը, որպեսզի մարզի ակտիվին հարկադրեն հավանություն տալ ԿԿ-ի որոշմանը: Բայց այն ձախողվեց. փետրվարի 26-ի Գորբաչովի դիմումը ծնեց Սունգալիթյան ցեղասպանությունը: Մարտի 24-ի ՍՍՀՄ ԿԿ-ի և ՍՍՀՄ կառավարության որոշմամբ Ղարաբաղի մարզին 400 թե 500 մլն ռուբլի հատկացնելը մերժվեց մեր ժողովրդի կողմից, և Շարժումն էլ ավելի ակտիվ բնույթ ստացավ:

1988թ. մայիսին Հայաստանի և Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմների առաջին քարտուղարներ Կ.Դեմիրճյանն ու Ք.Բաղիրովն ազատվեցին պաշտոնից, և նրանց փոխարինեցին Սուրեն Հարությունյանը և Աբդուռահման Վեզիրովը: Ոչինչ չփոխվեց:

1988թ. հունիսին Գորբաչովի կողմից Մոսկվա կանչվեցին Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանը և Հայաստանի ու Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմների նորընտիր քարտուղարներ Ս.Հարությունյանը և Ա.Վեզիրովը, որտեղ ՍՍՀՄ ԿԿ գլխավոր քարտուղարը նրանց հանձնարարեց իրենց Գերագույն խորհուրդներում քննարկել ԼԴԻՄ-ի մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը և համապատասխան որոշումներ ընդունել: Հայաստանի ԳԽ հունիսյան նստաշրջանը, քննարկելով փետրվարի 20-ի որոշումը, համաձայնություն տվեց ԼԴԻՄ-ը Հայկական ՍՍՀ կազմի մեջ մտնելուն, իսկ Ադրբեջանի Գերագույն խորհուրդը հակառակ որոշում ընդունեց: 1988թ. հուլիսի 18-ին ՍՍՀՄ ԳԽ նախագահության նիստը քննարկեց «Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ երկու հանրապետությունների Գերագույն խորհուրդների որոշումների մասին հարցը, մինչ այդ էլ մյուս հանրապետություններն էին քննարկել և Կրեմլի թելադրած որոշումներն ընդունել, իսկ ՍՍՀՄ ԳԽ նախագահության որոշումն այսպես էր.

«Անհնարին է Հայկական ՍՍՀ և Ադրբեջանական ՍՍՀ սահմանների և սահմանադրական հիման վրա հաստատված ազգային տարածքային բաժանման փոփոխումը», որն ավելի շիկացրեց Արցախում տիրող իրավիճակը, իսկ Ադրբեջանի իշխանությունները, նորանոր միջոցների դիմելով, փոխում են մեր մարզի ժողովրդագրությունը. արհեստականորեն ավելացնում ադրբեջանցիների թիվը, իսկ հայերին քշում Բաքվից, Կիրովաբադից և այլ քաղաքներից.

13.01.1989թ.: Բաքվի Ձերժինսկու անվան ակումբում հրավիրվեց Ադրկոմկուսի ակտիվի ժողով, որտեղ զեկուցումով հանդես եկավ Ա.Վեզիրովը և նույն երեկոյան հեռուստացույցով հաղորդվեց: Նա Կրեմլի կողմից ընդունված որոշումն ընթերցեց յուրովի, որը ծափահարությունների արժանացավ: Վեզիրովն ակտիվի մասնակիցներին և իր ժողովրդին հասկացրեց, որ այդ Հատուկ կոմիտեն աշխատելու է Ադրկոմկուսի ԿԿ-ի հետ համագործակցած: Այնուհետև բարբառեց, որ, Վոլսկու արտահայտությամբ, պատրաստվում են մեզ «Սունգալիթի սպանդի տարելից»-ը՝ ավելացնելով, թե իբր բռնել են մի ոմն Սարգսյանի՝ պայթուցիկ նյութերով ճամպուրկով, որը պետք է օգտագործի Տոլ գյուղում: Այդ ասելով՝ նա մի քանի անգամ հիսթերիկորեն գոչեց. «Ընկերներ, Мы не должны спать, не спать, не спать»: Լսում ես, ու զարմանում.

մի՞թե սա Կենտկոմի առաջին քարտուղարի արտահայտություն է: Նա կրկին թշնամություն է սերմանում և մեզ՝ արցախահայերիս, ափերից հանում: Նշեց նաև, որ Վոլսկու հետ խոսված է Ղարաբաղում հրկիզված տները վերակառուցել և թուրքերով բնակեցնել, շենացնել ադրբեջանական գյուղերը, որ Ղարաբաղը շրջապատող շրջանների ղեկավարները պետք է սերտորեն համագործակցեն Վոլսկու հետ... Այս էր Վեզիրովի ծրագիրը:

15.01.1989թ.: Ա.Վոլսկին Մոսկվայից հարցազրույց տվեց Հատուկ կառավարման կոմիտեի առաքելության մասին:

16.01.1989թ.: Ընկ. Վոլսկին Ստեփանակերտում է:

17.01.1989թ.: Նա իր մոտ հավաքեց արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարներին և համապատասխան ցուցումներ տվեց: Կարծում եմ, որ Հատուկ կառավարման կոմիտեն կարող է լավ արդյունք տալ, եթե Ադրբեջանի կառավարությունն ու կոմկուսի Կենտկոմը չխառնվեն ու չխանգարեն նրան (իմ կարծիքն է): Հատուկ կոմիտեի մասին որոշման 6-րդ կետը նշում է, որ Ադրբեջանի ԳԽ-ի կողմից որոշում ընդունվի, բայց այսօր հունվարի 17-ն է, իսկ նա լռել է, մինչդեռ ասված է, որ նա պետք է սույն հրամանագրից բխող համապատասխան որոշում ընդունի:

19.01.1989թ.: Վոլսկին կրկին հանդիպում ունեցավ արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարների, այս անգամ՝ բանվորների հետ միասին:

20.01.1989թ.: Տեղական հեռուստահաղորդմամբ ելույթ ունեցավ ընկ. Վոլսկին և ներկայացրեց Հատուկ կոմիտեի անդամներին՝ մեղքով առաջիկա հիմնական խնդիրները, որ պիտի կենսագործվեն: Նշեց նաև, որ այսօրվանից գործողության մեջ է ՍՍՀՄ ԳԽ նախագահության հրամանագիրը:

26.01.1989թ.: Հատուկ կոմիտեի նախագահ Ա.Վոլսկին Բաքվում է, նա հանդիպեց Վեզիրովի հետ, խոսեց ՍՍՀՄ կառավարության կողմից մարտին ԼԴԻՄ-ին հատկացված 400 մլն-ի և տնտեսական հաշվարկի անցման, փախստականներին իրենց տները վերադարձնելու մասին («Время»-ով լսեցի), բայց իրականում պարզվում է, որ մեր ավտոբազայի բոլոր մեքենաները հատկացված են Բաքվից հայերի ունեցվածքը Ստեփանակերտ տեղափոխելուն: Այստեղ-այնտեղ լսում եմ մարդկանց, որոնք դժգոհություն են հայտնում Հատուկ կառավարման կոմիտեից, բայց չգիտեմ ինչու, ես հույսեր եմ կապում նրա հետ:

27.01.1989թ.: Այսօր, երեկոյան մեր տուն եկավ օպտիմիստ Սեզոն՝ Սերգեյ Առուշանյանը, Սլավիկի եղբայրը: Նա ինձ և կնոջս համոզում է, որ մեր անջատումը Ադրբեջանից և Հայաստանի հետ վերամիավորման հարցը համարյա լուծված են, կառավարությունը փաստորեն ժամանակ է անցկացնում, հարցի լուծումը ձգձգում է, որպեսզի հնարավորություն ստեղծվի այդ հարցն իրականացնելու, մենք պետք է ամուր կանգնենք (ուրախ եմ, որ մենք այսպիսի տղամենք ունենք):

31.01.1989թ.: Կուսակցության Ստեփաղկոմն սրտաբաց զրույցի էինք բռնվել Արկարի Վոլսկու հետ, որը դիմելով Ռոբերտ Քոչարյանին, ասաց. «Մեր կոմիտեում տեղ է հատկացված նաև մարզի ներկայացուցիչների համար, ուրախ կլինեմ, որ դու համաձայնվես մեզ հետ միասին աշխատել», իսկ Ռ.Քոչարյանը պատասխանեց. «Ես դեռ համոզված չեմ Հատուկ կոմիտեի հայանպաստ գործունեությունը դրսևորելու Ձեր խոստումներում, կապրեմք, կտեսնենք»:

Ահա այսպես սկսվեց 1989-ը...

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ-100

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀԻՆ` ԽՈՂԵՐԻ ԿԻՉԱԿԵՏՈՒՄ

ՀԱՅՈՑ ԲԱՐԿԻՆ

Ինչքան մենակ բուսնում է նա լեռան ետև, մեն-մի ծորում, Ինչքան հեռու իր մոր աչքից, այնքան բռնում է ուժը լարում, Այնքան ավել ծյուղը փռում, արմատները խորն է խորում,

Այնքան համար ձգվում է վեր, այնքան բարձր է հայոց բարդին: Ինչքան նրա դեմը փակում, խորն է ծածկում լեռը Մռավ, Ինչքան կոծում, կողմ են ծծում շանթ ու անձրև, ամպ ու մռայլ, Այնքան շանթին ծակատ տալիս, կանաչում է շատ ու շոյալ, Այնքան համար ձգվում է վեր, այնքան բարձր է հայոց բարդին: Զգվում է վեր, որ բարձրանա, որ գլուխը մի կերպ հանի Քար ու ժայռից ու երևա, ու երևա՝ Երևանին, Ասի՛ նայի՜ր, եղե՛լ եմ, կա՛մ ու կլինե՛մ, ինչ էլ լինի, Դու հավատա, լեռներից վե՛ր, քարից կա՛րծր է հայոց բարդին:

Մեր ընկալումներում Ամենայն հայոց բանաստեղծուհու՝ Սիլվա Կապուտիկյանի ներառվածը բացվում է ստեղծագործական ձևերի առանցքային թեմաներով՝ հայերգու-թյուն, անանձնական քնար, սիրերգություն, ծոցերգեր ու տագնապներ: Թեմաներ, որոնք կապված են իր սիրելի ժողովրդի ճակատագրի հետ:

- Սեղմիր ատամը, դու ամենքի մոտ Բացեիք բայու իրավունք չունես, Թեկուզ վիրավոր, թեկուզ արնաքամ՝ Զենքերդ տալու իրավունք չունես: Դու՝ հայ բանաստեղծ, ինչ էլ որ լինի, Վերջին գինվորդ էլ ընկնի հուսահատ, Քո ժողովրդի հավերժությանը Զիսկապարտ իրավունք չունես:

Նրա հավատամքը ժողովրդի ուժի գնահատումն է, կոչումը՝ ժողովրդի ճակատագիրը կիսելու պատրաստակամությունը, խիզախու-նք՝ աներկբայորեն արդարության շեփոր հնչեցնելը:

Սիլվա Կապուտիկյանը սիրված է մեծ ճանաչում ունեցող բանաստեղծուհի է, ամենա-համբավավորը վերջին 100 տարում: Սեփա-կան ուղի հարթող է ճշմարտության ուղի բացող բանաստեղծուհի լինելով՝ Սիլվա Կապու-տիկյանը երբեմն, այնուամենայնիվ, կարիք էր զգում հեներալին, «Պարտ ու բեռից կթա՞ն հոգուս// Մի հեներալան հանդիպեր... Յեթիաթի ծեր մի իմաստուն-Մի Թունանյան հանդի-պեր...»:

Ծնված լինելով 1919թ. հունվարի 20-ին՝ Վանից երևան գաղթած ծնողների ընտանի-քում, վաղ մանկությունից ճաշակել է որոն-թյան դառնությունը, քանզի հայրը՝ Բարունակ Կապուտիկյանը, մահացել է մինչև դատեր ծն-վելը: Սովորել է Երևանում, ապա՝ Մոսկվա-յում: Ստեղծագործել է պատանեկության տա-րիներին՝ տպագրվելով «Պիոներ կանչ» թեր-թուլում, մշտապես զգալով, որ ազնիվ մի կարոտ մեղեդու պես, սիրտ պես կրթում է իր մեջ՝ ծնելով տագնապներ ու կարոտի տենչ... Եվ հայոց երգի մատյանում մի մնայուն էջ լցվեց հավերժվող հառաչով կնոջ:

Բանաստեղծության թագուհին այդ մնա-յուն էջը գրեց սրտաբուխ, հավատով, երկայն-մտությունքով, քանզի մտորում էր իր ժողովրդի հավերժ մասին՝ տալով այն որպես մի ընծա հիմնավոր իր ժողովրդին, որի ծոցում ծվա-րել է բարությունը՝ որպես տեղացող անձրև հոգու և հողի ոռոգման համար: Ով լավություն է անում՝ չիուսակով հատուցման ու վարձի, դրանով աշխարհն ավելի լավ է դարձնում, և ծովից լավի շոգին է բարձրանում, որ լավով լցվի ամպը երկնքում... Զնայած կյանքի հարվածներին, Սիլվա Կապուտիկյանի բանաստեղծական մուտքը և ընթացքը եղել են շունչալից. «Իմ կյանքը ան-ցավ ծափ ու ծողկի մեջ// Ես անչափ դյուրին հասե երագիս// Ես՝ գոհունակությանս պատա-նի հագիվ// Ինձ անվանեցին արդեն բանաս-տեղծ»:

Սիլվա Կապուտիկյանը հայոց մտքի շաղա-խը հունցեց իրեն շնորհված ծիրով, ավելին՝ կոչվեց Ամենայն հայոց բանաստեղծուհի՝ սիրված լինելով համայն հայության կողմից: Ուր այցելել է նա, գոհունակությամբ է ընդուն-վել ազգերի, մանավանդ՝ հայ ժողովրդի կող-մից և արժանացել մեծարանքների: Գնացի-րելով Սփյուռքի հայ գաղթաբնակներում՝ Կա-պուտիկյանը ոգի է հաղորդել հայությանը՝ կատարելով հայապահպան մեծ դեր, ոգեղեն լիցքերով խրախուսելով նրանց: Նա ցավով է արժանազդել. «Քարավանները դեռ քայլում են» հայրենիքից դուրս, հայության որդիները, դեգերելով աշխարհի ծագերում, բախտ են որոնում հայրենիքից դուրս: Իր «Խճանկար

ՊԱՐՄԵՐԻ ԲԱՐՔԱՆԸ

ժայռի նման է այս հին բարբառը, ժայռի պես կոշտ է, չըհղկված. Ու ժայռի պես էլ կարծր է, համար է, Զի՛ պոկի նրան ոչ մի հարված. Ծուրթերի վրա այնպես է բառը, Ինչպես որ ժայռն է հողում խրված...

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Լալ ջուր հայի պապակ շուրթերին. անգամ Նե-ղոսի պիեթին օրոր է ասում մեր Ջանգուն, և արմավենու ստվերում հայոց բարդին է նա-զում: Եվ օտար հողում խամրող մեր բառերին ուժ է տալիս Երևանի ձայնը, դառնում ավիչ ու նեկտար, դառնում հայի ցանքող երակի հոր-դուն հոսք կենսաբեր... Կապուտիկյանի պոեզիայում հզոր է հնչում մայրենի լեզուն՝ որպես ժամանակի ակունք-ներից, դարերի լեռնապարներից եկած լեզու: Գայլյան մետի սույլ ու շառաչով եկավ, Ավա-րայրի վրա կանգնած աղոթք-աղաղակի սաստկությամբ, հայ պատանու շուրթերից բխած երգմամբ, որ կամուրջ է դառնում դարե-դար անցումների՝ բորբ պահելու մեր սրտի վահագնաբոց կրակը, որպես բյուրավոր նա-հատակների վերջին հառաչի հետ ավանդ-ված պատգամ, օտարության բիրտ ալիքների միջից կանչող ապավեն, որպես երդում՝ պահ-պանելու տոհմական սրբությունները իր մեջ կրող տաք շնչով, արյունով, այրումով...

Սյո՛, լեզուն սրբազան երդում է, իսկ Սուրբ լեռը մեր՝ Աստօծ նախանշան. Օ՛, լյառն Արարատ Կերպավորի ինձ ըստ քո պատկերի... Աստօծ պատկերը կրող Աստօծ ելության մի մասնիկն է՝ Սուրբ լեռան տեսքով: Մեր Սուրբ լեռը, որ մեր փառացել է ջրհեղեղներում, հենա-րան դարձել խեղդող տապախին, որի մինչև հուսկ ամենավերջին ավագահատիկը ամե-նամե՛րն է, ամենահա՛յը, մեզ սովորեցրել է իր նման լինել՝ օժտելով մեզ էլ իր անգրահելի այդ դաշնությամբ... Սակայն քարտեզը այդ՝ չափած-գծած, մեր խորին ցավն է, որ մեր ըն-կապում է մեր հավերժության խորհուրդը դառնում, որից՝ Մեր ընդվզումի կրակն է ժայթքում, Եվ բորբոքում մեր ցասունը կենցաղ: Գայլյան արվեստն աշխարհը ահեղ եղեմնի գար-կից դարձավ մի բուռ. վաղո՛ւց, շա՛տ վաղուց այլևս մերը չեն ո՛չ Վարագա սարի արեգակը, ո՛չ Սասնա անտառին իջնող մանաման, ո՛չ Մշո դաշտի շոյող սոսափը, և սահմանից այն կողմ Անիի մայր տաճարի ավերակներն են:

Գայլյան արվեստն աշխարհ, Դու այսպես եղար, Դրա համար մենք քեզ սիրեցինք... Ցավոտ, ցավախառն: Քո գրկում անգամ՝ քեզ կարոտելով, քեզ կորցնելու ահից՝ տագնապած, քեզ ունենալու խիստից՝ երջանի՛կ, Եվ բախտիդ համար անվերջ, ամեն պահ մենքել-ապրելով... Իսկ թե ինչու այսպիսի ճակատագիր ունե-ցանք, բանաստեղծուհին պարզաբանում է իր ուղեգրայիններում ու քառյակներում. Գայլյան, գուցե այսպես փոքրացար, Որ իսպառ լուծվես մեր սրտերի մեջ, Այրված մատյանի պատառիկ դարձար, Որ վրադ դողանք բյուր թղթերի մեջ: Մեր երկիրը զարկվեց, բայց հառնեց նորո-վի: Ունենք 100-ամյա հայոց պետականու-թյուն, որ արհավիրքները թոթափած՝ կերտել է իր նոր պատմությունը և աշխարհում իր ու-րույն տեղն ունի: Ուզում ենք կերտել հզոր Գայլյանս, բայց պատմության ցավը դեռ մխում է: «Քելե, լառ»-ն հնչում է յուրաքանչ-յուր հայի ունկերում՝ Քելե, լառ, քելե երթանք մըր երգիր// Իմա՛լ կեղնի, իմա՛լ չէրթանք մըր երգիր... Կգա ժամանակ, որ կփլվի ամեն պատմե՛չ, ամեն սուտ, պիտի երթանք, պիտի երթա՛ն մեր երկիր:

Սիլվա Կապուտիկյանը «մտորումները» մտա-սկեռված են Յանոզի հարցի լուծմանը: Զխո-տորվենք մեր «ճանապարհի կեսին» և չնոռա-նանք մեր անցյալ բախտի դարավոր մորմո-քը: Բիբլիական հողում ապրել է մի հաշտ ժո-

ղովուրդ, որ քարից է քանել իր ավուր հացը և նվիրումով է երկիրն իր կերտել, սակայն աշ-խարհն է եղել անհաշտ, բախվել են կռվի ճամ-փաները մութ: «Ու մոլորվել է ծուխ ու փոշու մեջ// Երկիրն անարքա ու անճանապարհ...»

Եղեմնի կակիծը մեր հոգուն՝ մեր անհուն վրեժը պիտի առնենք ապրելով, «ապրելով համար, հազարապատիկ»:

Մեզ բաժին հասած հայոց պատմությունը լի է աղետներով, բայց մեր վերապրումի բերկ-րանքն անսպառ է. ամեն նոր քարից աշխար-հը խորքից զգալու համար՝ դարի նոր խոսքը նոր լեզվով ասելու, դարի նոր բախտը որոնող ոգով կերտելու: Ու մենք ժառանգորդն ենք նոր դարի ու բախտի:

Բայց մեր զավակների ընտրանին մի վեր-ջին անգամ գոհեց իրեն՝ հազար «ծեբերով ապրելուն կառչած, հազար թելերով կյանքով լցվելով: Եվ չկա սպառնում մեր իրն երակին»:

Գայլյան զավակները, որպես մի-մի թել հայ հյուսվածքների, ապրում են հայոց ամեն ին-չերով: Եվ օրհնվում է աշխարհը հայոց:

Սիլվա բանաստեղծուհու թողած մնայուն էջը: Գայլյանից ու ժողովուրդը, միմյանց մեջ միաձուլված, ապրում և արարում են միմյանց-ով և ստեղծում հավերժություն մի հայրենի-քի, որ բիբլիական օրհնությունը պահելով՝ բացում է իր նոր այգաբացը՝ նոր արշալույս-ների շառագույնով:

Գայլյանս Կերտում է իր նոր օրը: Այդ նոր օրվա այգաբացը տեսավ բանաստեղծու-հին: Արցախյան պայքարի իրկեզ օրերին նա բազմիցս եկավ Արցախ՝ քաջալերանքի խոս-քը շուրթերին, անմիջական օգնության նա-խաձեռնությամբ և հավատացած էր՝ ժայռի նման քարբառ ունեցող ժողովուրդը ժայռի նման էլ ամուր կկանգնի իր հողում, և Ղարա-բաղի բարբառը առաջվա պես հնչում է հա-մառ.

ժայռի նման է այս հին բարբառը, ժայռի պես կոշտ է, չըհղկված, Ու ժայռի պես էլ կարծր է, համար է, Զի՛ պոկի նրան ոչ մի հարված. Ծուրթերի վրա այնպես է բառը, Ինչպես որ ժայռն է հողում խրված...

Մեծահռչակ բանաստեղծուհին պայքարի ելած մարտիկների քաջալերանքն էր...

Սիլվա Կապուտիկյանը արժանացել է կա-ռավարական ամենաբարձր պարգևներին՝ ԽՍՀՄ և Գայլյանի պետական մրցանակ-ների, արվեստի վաստակավոր գործչի, իսկ ծննդյան 80-ամյակին՝ ԳԳ գիտությունների ակադեմիկոսի կոչման: 80-ամյա բարձունքից նայելով իր անցած ուղուն, հանրագումարի բերելով իր վաստակը՝ գրեց. «Ի՛նչ լավ է լի-նել 80 տարեկանը// Զանդարտ գնել անցյալն ու ներկան»:

Բանաստեղծուհին կյանքին հրաժեշտ տվեց 2006թ. օգոստոսի 26-ին՝ թողնելով իր անանց երգերն ու պատգամները:

2019թ. հունվարի 20-ին լրացավ մեծ բա-նաստեղծուհու 100-ամյակը, բանաստեղծու-հի, որով հպարտանալու իրավունք ունի ամեն մի հայորդի: Նրա համբավը տարած-ված է ողջ երկրագնդով, և, հիրավի, արժանի է մեծարանքի, ինչին արժանացել է կենդանու-թյան օրոք:

Գայլյան երգի մատյանում Սիլվա Կապու-տիկյանի թողած մնայուն էջը ժառանգություն է իր ժողովրդին՝ հայոց ոգին արթուն ու խան-դավառ պահելու:

Բանաստեղծները մարգարեանալու շնորհ ունեն: Կապուտիկյանը կանխատեսեց 2018-համազգային զարթոնքը: 88-ի հրաշք սերուն-դը, որ «արյուն էր տվել, կյանք ու որդի», դար-ձավ նաև տարագիր: Ազգի Ոգին հարձակել է, ու միասնական հզոր Ոգով նորից համախմբ-վել է հայը՝ կերտելու նոր և հզոր Գայլյանս: Սա համախմբումն է ողջ ազգի: Կարևորը այդ Ոգին պահելն ու պահանջատեր լինելն է:

Պատերազմում հաղթանակած և գալիք հնարավոր պատերազմը սանձող ժողովրդին անհրաժեշտ է Ոգու հաղթանակը պահել և Գայլյան երկիրը շենացնել, գորացնել՝ որպես սրբազան ավանդ գալիք սերունդներին փո-խանցելու...

Գայլյանս Գայլյան քո ինչը կշարունակվի Գոյր Գալիսի մեջ:

Վարդիթեր ՀԱԿՈՒՑՅԱՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ

ԽՆԴԻՐՆԵՐ ԺԱՄԱՑՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երկրաչափության դպրոցական և բուհական ծրագրերը պարունակում են հարթության ձևափոխությունների (զուգահեռ տեղափոխություն, կենտրոնական և առանցքային համաչափություն, պտույտ կետի շուրջը և այլն) տեսություն, որը լայն կիրառություն ունի կոնստրուկտիվ երկրաչափությունում կառուցման խնդիրների լուծման ժամանակ: Կառուցման խնդիրներն ունեն սովորողի տրամաբանական և ստեղծագործական մտածողության զարգացման ծավալուն հնարավորություններ և տարբերակներ:

Ցուցադրենք նշված տեսության կիրառությունը՝ օգտագործելով ժամացույցի հրաշալի հնարավորությունները: Առաջարկվող խնդիրների յուրահատկությունն այն է, որ նրանք ունեն համարյա նույն բովանդակությունը, բայց տարբեր լուծումներ և յուրաքանչյուր խնդիր ունի իր նմանը 1-ից 12 ժամերի համար: Դա հնարավորություն է ստեղծում սովորողներին առաջադրել նույն մակարդակի դժվարության խնդիրներ, բայց տարբեր բովանդակությամբ:

Խնդիր 1. Ժամը 1-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կունենան համաչափության կենտրոն:




Նկ. 1

Լուծում: Ժամը 1-ին ժամացույցի մեծ սլաքը գտնվում է 12 -ի վրա, իսկ փոքրը՝ 1-ի վրա: Մեծ սլաքը 60 րոպեում պտտվում է 360° , հետևաբար, 1 րոպեում պտտվում է 6° : Փոքր սլաքը պտտվում է 12 անգամ դանդաղ, հետևաբար՝ 1 րոպեում պտտվում է $0,5^\circ$: Խնդրում պահանջվում է, որ սլաքներն ունենան համաչափության կենտրոն՝ այսինքն՝ ե՞րբ O կետը կհանդիսանա նրանց համաչափության կենտրոնը, կամ որ միևնույնն է, քանի՞ րոպե հետո սլաքները կդասավորվեն մի ուղիղ վրա (նկ. 1):

Ենթադրենք դա տեղի կունենա t րոպե հետո: Ժամացույցի մեծ սլաքը կգծի անկյուն՝ հավասար $6^\circ t$: Այդ նույն ժամանակահատվածում փոքր սլաքը կգծի $0,5^\circ t$ անկյուն: Ուրեմն, այդ անկյունների տարբերությունը կտա սլաքների սկզբնական դիրքի կազմած անկյունը, որը հավասար է 30° -ին՝ գումարած փոքր սլաքի գծած անկյունը՝ $0,5^\circ t$: Կազմենք հավասարումը և լուծենք:

$$6^\circ t - (30^\circ + 0,5^\circ t) = 180^\circ \Rightarrow 5,5^\circ t = 210^\circ \Rightarrow 11^\circ t = 420^\circ; t = \frac{420^\circ}{11^\circ} = 38\frac{2}{11} \text{ րոպե:}$$

Խնդիր 2. Ժամը 1-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կդասավորվեն համաչափ 2-8 ուղղի նկատմամբ:



Նկ. 2

Լուծում: 2-8 ուղիղ ասելով պետք է հասկանալ ժամացույցի 2 թիվը 8 թվին միացնող ուղիղը, որն անցնում է սլաքների հատման կետով (նկ. 2): Ժամը 1-ին սլաքների կազմած անկյունը հավասար է 30° : Սլաքները 2-8 ուղղի նկատմամբ համաչափ դասավորվելու պահին ժամացույցի մեծ սլաքը անցել է t րոպե, իսկ փոքր սլաքը՝ $0,5^\circ t$: Կազմենք հավասարում և այն լուծենք:

$$6^\circ t - 60^\circ = 30^\circ - 0,5^\circ t \Rightarrow 6,5^\circ t = 90^\circ \Rightarrow 13^\circ t = 180^\circ;$$

$$t = \frac{180^\circ}{13^\circ} = 13\frac{6}{13} \text{ րոպե:}$$

Խնդիր 3. Ժամը 3 -ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի մեծ սլաքը կծածկի փոքր սլաքին (նկ. 3):



Նկ. 3

Լուծում: Օգտագործենք ժամացույցի սլաքների պտտման բանաձևերը և կազմենք հետևյալ հավասարումը.

$$6^\circ t - 0,5^\circ t = 90^\circ \Rightarrow 5,5^\circ t = 90^\circ \Rightarrow 11^\circ t = 180^\circ \Rightarrow$$

$$\Rightarrow t = \frac{180^\circ}{11^\circ} = 16\frac{4}{11} \text{ րոպե:}$$

Նկարում երևում է, որ փոքր սլաքը հորիզոնական դիրքից շեղվում է $1\frac{4}{11}$ րոպեի չափ, որը համընկնում է հաշվարկների արդյունքի հետ:

Խնդիր 4. Ժամը 3-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կկազմեն ուղիղ անկյուն:

Լուծում: Կազմենք հավասարում, որի իմաստը բխում է նկ. 4-ից, որտեղ սլաքները կազմում են ուղիղ անկյուն:

$$6^\circ t - 90^\circ - 0,5^\circ t = 90^\circ \Rightarrow 5,5^\circ t = 180^\circ \Rightarrow$$

$$\Rightarrow 11^\circ t = 360^\circ \Rightarrow t = 32\frac{8}{11} \text{ րոպե:}$$

Խնդիր 5. Ժամը 9-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի մեծ սլաքը կծածկի փոքր սլաքին:

Լուծում: Ժամացույցի մեծ սլաքը կգծի $6^\circ t$ անկյուն, որն իր մեջ ներառում է 270° անկյուն՝ գումարած փոքր սլաքի գծած $0,5^\circ t$ անկյունը (տես՝ նկ. 5): Հետևաբար՝ հավասարումը կունենա հետևյալ տեսքը.

$$6^\circ t = 9 \cdot 30^\circ + 0,5^\circ t \Rightarrow 5,5^\circ t = 270^\circ$$

Լուծելով գծային հավասարումը՝ կստանանք.

$$11^\circ t = 540^\circ \Rightarrow t = 49\frac{1}{11} \text{ րոպե:}$$

Առաջարկում ենք ինքնուրույն լուծել նմանատիպ հետևյալ խնդիրները:

1. Ժամը 2-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կունենան համաչափության կենտրոն:

$$\text{Պատ. } 43\frac{7}{11}:$$

2. Ժամը 3-ն է: Քանի՞ րոպե հետո սլաքները կունենան համաչափության կենտրոն: Պատ. $49\frac{1}{11}$:

3. Ժամը 4-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կունենան համաչափության կենտրոն: Պատ. $54\frac{6}{11}$:

4. Ժամը 5-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կունենան համաչափության կենտրոն: Պատ. 60:

5. Ժամը 2-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կդասավորվեն համաչափ 2-8 ուղղի նկատմամբ: Պատ. $9\frac{3}{11}$:

6. Ժամը 3-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կդասավորվեն համաչափ 4-10 ուղղի նկատմամբ: Պատ. $23\frac{1}{13}$:

7. Ժամը 4-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կդասավորվեն համաչափ 3-9 ուղղի նկատմամբ: Պատ. $9\frac{3}{11}$:

8. Ժամը 5-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կդասավորվեն համաչափ 4-10 ուղղի նկատմամբ: Պատ. $13\frac{11}{13}$:

9. Ժամը 6-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կդասավորվեն համաչափ 5-11 ուղղի նկատմամբ: Պատ. $18\frac{6}{13}$:

10. Ժամը 7-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կկազմեն 30° անկյուն: Պատ. $32\frac{8}{11}$:

11. Ժամը 8-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կկազմեն 8° անկյուն: Պատ. $42\frac{2}{11}$:

12. Ժամը 5-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կկազմեն 55° անկյուն: Պատ. $17\frac{3}{11}$:


13. Ժամը 11-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կկազմեն 100° անկյուն: Պատ. $12\frac{8}{11}$:

14. Ժամը 4-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կկազմեն 44° անկյուն: Պատ. $13\frac{9}{11}$:

15. Ժամը 1-ն է: Քանի՞ րոպե հետո ժամացույցի սլաքները կկազմեն 1° անկյուն: Պատ. $5\frac{3}{11}$:



Նկ. 4



Նկ. 5

Ռ. ԱՈՒՔԵԼՅԱՆ
ԱրՊՅ դոցենտ, մ.գ.թ.

ՀՈՐԴՈՐԱԿ՝ ՀԱՅԵՐԵՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ ՈՒՆԵՋՈՂ ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ

Աժիտատժ - իրարանցում
ալեգորիա - այլաբանություն
ակտուալ - արդիական, հրատապ
ամպուլա - սրվալ
անատոմիկում - հերձարան, դիախեր-
ծարան
անկետա - հարցաթերթիկ
ասորտիմենտ - տեսակաճի
բլանկ - ձևաթուղթ
գարնիր - խավարտ
գրանտ - դրամաշնորհ
դեզինֆեկցիա - ախտահանում, վարա-

կազերծում
դեզինֆորմացիա - ապատեղեկատվու-
թյուն
դեկլարացիա - 1. հռչակագիր, 2. հայ-
տարարագիր, 3. հայտարարություն
դեմոգրաֆիա - ժողովրդագրություն
(դեմոգրաֆիական - ժողովրդագրական)
դեկա - մասնաբան
գոթ - խալիպ
էլիտա - վերնախավ, ընտրախավ
ժելե - դոնդող
ինդիվիդուալ - անհատական


ինվեստիցիա - ներդրում
ինվեստոր - ներդրող
ինցիդենտ - միջադեպ, դեպք
լակոնիկ - սեղմ, հակիրճ
լիբերալ - ազատական
լիդեր - 1. առաջնորդ, 2. առաջատար
լոկալ - տեղային
կամին - բուխարի
կարկաս - հիմնականաբար, հիմնամաս,
կմախք
կոլեկցիա - հավաքածու
կոլեկցիոներ - հավաքորդ

հորոսկոպ - աստղագուշակ
մարկետ - խանութ
մեմորանդում - հուշագիր
պիպետկա - կաթոցիկ
ստիմուլ - խթան, ազդակ, շարժառիթ
օֆիս - գրասենյակ
ֆակտոր - գործոն
ֆիասկո - (լիակատար) ծախողում,
տապալում
ֆոյե - ճեմասրահ

Լեզվի կոմիտե

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՆԱՏԱՃԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՀԱՎԱՏԱՄՔԸ



ԼՂՀ վաստակավոր մանկավարժ, Մարտակերտի Վ. Բալայանի անվան հ.1 միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նատաշա Պողոսյանը վերջերս լույս է ընծայել «Մանկավարժի օրագիր» վերտառությամբ իր երկրորդ գիրքը: Դա ստեղծագործող ու նվիրյալ մանկավարժի չորրորդ ժողովածուն է: Ինչպես ուսուցչուհին է խոստովանում՝ գիրք գրելու մտահղացումը նրա մոտ ծագել է տարիներ առաջ, երբ նպատակադրվեց իր համեստ ներդրումն ունենալ մանկավարժության ասպարեզում, ներկայացնել ուսուցչի բարոյ ու պատասխանատու աշխատանքի նրբությունները, որով օգնած կլինեն հայոց լեզու և գրականություն դասավանդող ուսուցիչներին, ընդհանրապես՝ մայրենիի նվիրյալներին: Եվ 2013-ին ծնվեց նրա առաջին՝ «Ուսուցչի իմ թղթապանակը» մեթոդական ձեռնարկը, որը հրատարակվեց ԼՂՀ ԿԳ նախարարության երաշխավորությամբ ու ֆինանսական միջոցներով: Այն ուսուցողական նյութերի յուրատիպ ամփոփագիր է՝ հեղինակի մանկավարժական փորձի ուշագրավ արձանագրումներով և լավ ընդունելություն գտավ մանկավարժների ու աշակերտների՝ գրքի իրական հերոսների շրջանում:

Հեղինակի գրքերից մեկն էլ նվիրված է մեր հայրենակից գրող Լևոն Աղյանի ստեղծագործություններին:

«Մանկավարժի օրագիր» երկրորդ գիրքը, ինչպես և առաջինը, արցախյան յուրատիպ տարբերություն է, որի հերոսները սահմանափակված բնակավայրի բնակիչներն են՝ հեղինակի գործընկերները, սաները, հարևանները, հայրենյաց պաշտպանները, նահատակ տղաները, նրանց ծնողները: Ոչ ոք, ոչ մի իրադարձություն, ոչ մի երևույթ դուրս չի մնացել հեղինակի տեսադաշտից: Թվարկները մի քանի վերնագրեր, և պարզ կդառնա իր երկրի ճակատագրով պարզ մտավորականի հետաքրքրությունների ու մտահոգությունների շրջանակը: «Սոցցանցն էլ միջավայր է, որտեղ մաքրություն է պետք», «Մարտակերտ. այստեղ հավերժացած մեղեդիներ կան, լուսն երազներ», «Ծիշտ ապրելու իմաստը», «Հոգետանջ մի հարց, ուսուցիչն ու աշակերտը նույն տարածքում չեն», «Որտե՞ղ է պոեզիայի մշակույթը», «Ապրիլի 2-ը մեր ինքնաճանաչման սկիզբն էր», «Ինչո՞ւ մայիսի 1-ի տոնական օրվա շունչ չկա», «Բառի համը, բառի հոտը, բառի գույնը», «Բարձրագույն կրթության օգուտն ու վնասը», «Ո՞վ է մեղավոր, որ արցախյան այս նորածին բալիկն էլ պիտի արտագաղթի», «Ինչո՞ւ թաքցնել մտահոգությունը», «Թռչի՞ք ի համար կարգալ է պետք» և այլն:

Ամեն մի գրառում գեղարվեստական մանրապատում է, իրապարակախոսական ժանրի ստեղծագործություն: «Մանկավարժի օրագիր» առաջին գրքի մասին ԼՂՀ ԿԳ նախագահ Վարդան Հակոբյանն արտահայտվել է հետևյալ կերպ. «Մարտակերտում գրել այսպիսի գիրք՝ իսկապես հերոսություն է: Այն սպասված գիրք է ընթերցողի համար, առանձնանում է իր գործառնական նշանակությամբ: Այս գրքում ոչ միայն մեր հոգներն ու ցավերն են, այս գիրքը սպեղանի է, ուղեցույց, թե ինչպես պետք է պահել Մարտակերտը, Արցախը, Հայաստանը, ինչպես ընդունել բոլոր արկերը, հարվածները, ինչպես Սարոյանն է ասում, բայց չմեռնել, չընկնել, ապրել հողի վրա և այդ հողը քեզնով ապրեցնել»:

Մարտակերտում տեղի ունեցավ «Մանկավարժի օրագիր» գրքի շնորհանդեսը, որը վերածվել էր մանկավարժի մեծարձան, գրքի տոնի: Շրջակայքում մշակույթի տանը հավաքվել էին շրջվարչակազմի ղեկավար կազմը, ուսուցիչներ, մտավորական խավի ներկայացուցիչներ, հյուրեր մայրաքաղաքից: Հեղինակին առաջին շնորհավորողը շրջվարչակազմի ղեկավար Էդգար Հարությունյանն էր, որն իր ներդրումն է ունեցել գրքի հրատարակման գործում: Նա բարձր գնահատեց ուսուցչի կողմից գիրք գրելը և հայտարարեց. «Յուրաքանչյուր օր, յուրաքանչյուր ժամ պատաստական են կրթական ոլորտի յուրաքանչյուր նախաձեռնության ձեռք մեկնել, ավելին՝ անել հնարավորը և անհնարը, լրացուցիչ պայմաններ ստեղծել, որպեսզի ունենանք մանկավարժական նորանոր գրքերի հրատարակումներ, ի կատար ածենք աշակերտների և ուսուցիչների նորանոր նախաձեռնությունները»:

Կրթության բաժնի վարիչ Դավիթ Լալայանը ուրախալի փաստ համարեց, որ սահմանները, ռազմավարական նշանակություն ունեցող բնակավայրում՝ Մարտակերտում մանկավարժ իր պատասխանատու աշխատանքին զուգահեռ գիրք է գրում և տարիներով կուտակած գիտելիքները և փորձը նաև գրքի տեսքով է փոխանցում ներկա և գալիք սերունդներին: Նրա համոզմամբ՝ այն կխթանի ուսումնառաստիարակչական և հանրային խնդիրներին ճիշտ լուծում տալը:

«Ներկայիս խնդրված իրավիճակից դուրս գալու համար անհնար է բեռը կրթական համակարգի վրա է: Մենք ունենք Նատաշա Պողոսյանի նման ուսուցիչների կարիք, որովհետև բոլորիս է հայտնի, որ ազգի պատմության հիմքերը դրվում են դպրոցում: Մենք ոչ թե պետք է սուսկական բաղադրատարրը լինենք համակարգի, այլ լինենք ոգին, տերը, պատասխանատուն: Ն. Պողոսյանը հենց այդ ուսուցիչներից է:

Օրագրի ամեն մի էջ ինքնուրույն հանրաքվե է: Նման ուսուցիչների շնորհիվ առողջ է տրոփում կրթության համակարգի սիրտը»,- ասաց հեղինակի չորս գրքերի խմբագիր, ԼՂՀ ԿԳՍՆ մասնագիտական և բարձրագույն կրթության բաժնի պետ, հոգեբանական գիտությունների թեկնածու Լուսինե Ղարախանյանը:

Գրքի գրախոսներից բանասիրական գիտությունների թեկնածու Ջինաիդա Բալայանի որակումով՝ դիրքապահ ուսուցչուհի է Ն. Պողոսյանը: Եվ մեծարձան միջոցառումը հետաքրքիր երևույթ համարեց այն առումով, որ «Ուսուցչի առջև է, որ պետք է բոլորը խոնարհվեն»:

Գրքի մյուս գրախոս՝ բանասիրական գիտությունների թեկնածու Ջարիմե Սառաջյանն ընդգծեց Ն. Պողոսյան մտավորականի այն տեսակը, որն իր գործունեությամբ անադարտ է պահում հոգևոր դաշտի սահմանները:

Հեղինակին երախտագիտության խոսք ասացին մշակույթի աշխատողը, ուսուցչուհու աշակերտները, նախկին սաները, գործընկերները: Մեծարվեց մանկավարժը, որն իր ճանապարհն անցել է անկեղծ ու շիտակ, ով սովորեցնում է գեղեցիկն ու ազնիվը, սովորեցնում է զարմանալ, ամենակարևորը՝ սովորեցնում է սովորել:

Օրեր առաջ բոլորել էր Ն. Պողոսյանի հոբելյանը: Բոլոր ելույթ ունեցողները շնորհավորեցին նրան նաև այդ կապակցությամբ:

«Ես չեմ գրում որևէ մեկին հաճոյանալու կամ զովեստի արժանանալու համար: Սա ուսուցչի՝ ճշմարտության համար մղվող իմ ուրույն պայքարն է: Ես գտել եմ աշխարհը և ինքներս մեզ փոխելու բանալին. դա ճիշտն ու լավը ստեղծելու նվիրումն ու հավատամքն է, ճշտի սկզբունքով աշխարհը նվաճելը, աշխարհին տալն ու վերցնելը...», - ասելու իր բանաձևն է ներկայացրել մանկավարժ Նատաշա Պողոսյանը:

Ս. ԽԱՀՍՐՅԱՆ

ԴԻՄԱՆԿԱՐ՝ ՀՈԳՈՒ ԵՎ ՄՏՔԻ ԳՈՒՅՆԵՐԻՑ



Մանկավարժ Նատաշա Պողոսյանի դիմանկարը «Լուսարար»-ը ներկայացնում է նրա հետ հարցազրույցով, բայց ոչ թե նրա անմիջական մասնակցությամբ, այլ «Մանկավարժի օրագիր» գրքից նրա մտորումների միջոցով՝ նպատակ ունենալով այդ կերպ ընթերցողին ծանոթացնել նաև նրա ստեղծած մանրապատկերներին:

- Հեր ինքնակենսագրականը:
- Միջնակարգն ավարտելուց 20 տարի հետո միայն ինձ հաջողվեց մտնել դպրոց: Շատ դժվար էր այդ ճանապարհը, բացի դրանից, այն դարձել էր կյանքի նպատակ: 1976-ի դպրոցի շրջանավարտիս բախտ չվիճակվեց այդ տարի ընդունվել բուհ: Խորհրդային կարգերի քարացած կանոնների համաձայն՝ ընդունելության չորս քննություն բարեհաջող հանձնելուց հետո անգամ չընդունվեցի: Մեկ միավոր, որ չէր բավարարում... Այդ առաջ տրեցնող շարունակվեց հաջորդ տարի...

Մինչ այդ տարբեր աշխատանքներ տարա՝ ստած ձեռք բերելու համար, որ հնարավորություն ունենամ նորից փաստաթղթեր հանձնելու: Երկրորդ տարում հաջող քննություններ հանձնելուց հետո նորից դուրս մնացի ընդունելությունից: Այս անգամ իմ արցունքները պիտի միախառնվեին այն 0,5 միավորին, որ չէր բավարարում...
Բարձրագույն ընդունվելն ինձ համար դարձավ գերնպատակ, որի համար նորից սկսվեց մի մեծ պայքար: Ամռանն արևահարվում էի, դրան հաջորդում էր իմ աշխատանքը անձրևի կաթիլների տակ, և ձմռան սառնամանիքին ցրտահարվածիս սպասում էր մի նոր տքնաջան աշխատանք խաղողի բաց դաշտում:
Երրորդ տարին հաջող էր ինձ համար, երբ երջանկությամբ համակված՝ հասկացա, որ վերջապես Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողուհի եմ դարձել: Ուսանողական տարիներին գերազանց սովորելը դարձել էր նոր նպատակ, և ես համառորեն ձգտում էի հասնել դրան:
1982-ին գերազանցությամբ ավարտեցի բուհը: Բայց այդտեղ դժվարությունների վերջը չէկավ: Միջնակարգի դռները փակ մնացին ինձ համար, և ես հայտնվեցի տարբեր աշխատատեղերում՝ մանկապարտեզի դաստիարակչուհի, շրջանային պիոներական տան մեթոդիստ, դաստիարակչուհի գիշերօթիկ միջնակարգ դպրոցում, ապա՝ շրջանային լուսաշխատողների տան տնօրեն և, վերջապես, համատեղության կարգով՝ ուսուցչուհի գիշերային հեռակա դպրոցում:

Որքա՞ն դյուրին է թվարկելը, իսկ այդտեղ արցունքախառն վախվորած ճանապարհ կար երեկոյան ժամերին՝ գիշերային խավարի մեջ, որ ինձ այդ յուրատեսակ դպրոցն էր տանում, բայց նաև մասնագիտության հանդեպ սեր ունեմ, որ սպառվում էր ինձանից մեծահասակ այդ «աշակերտների» սառած հայացքներին նայելիս:
1992-ի Արցախյան պատերազմի տարիների բռնազաղթից հետո ապրեցի ՌԴ-ում, իսկ 1995-ին հայրենի հողի կանչով վերադարձա Արցախ և վերջապես 1996-ին աշխատանքի ընդունվեցի Մարտակերտի Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցում: Բայց այստեղ էլ դյուրին չէր իմ անցնելիք ճանապարհը. չնայած ձեռքբերումներիս հանդեպ ունեմ աչք էին փակում, բայց ամեն տարի պարզապես վրձնվում էի պատվոգրերով իմ աշակերտների հաջողությունների համար: Եվ ահա ուսուցչուհու բազմաբեղուն և տքնաջան աշխատանքս գնահատանքի արժանացավ 15 տարի հետո, երբ 2011թ. պարգևատրվեցի ԼՂՀ վարչապետի հուշամեդալով՝ մատուցած ծառայությունների և մանկավարժության մեջ ներդրած ավանդի համար:
2013թ. մասնակցեցի «Տարվա լավագույն ուսուցիչ» հանրապե-

տական մրցույթին ու պարգևատրվեցի ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ «Լավագույն ավանդույթների պահպանումը և նորարարությունը մանկավարժության մեջ» անվանակարգում հաղթելու համար: 2013թ. ԿԳ նախարարության երաշխավորությամբ և ֆինանսական օժանդակությամբ հրատարակվեց իմ առաջին գիրքը՝ «Ուսուցչի իմ թղթապանակը» մեթոդական ձեռնարկը, որը բաժանվեց Արցախի բոլոր դպրոցներին: 2014թ. ստացա հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման առաջին աստիճանի տարակարգ: 2014թ. ինձ շնորհվեց Արցախի վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում:
Այս օրերին էլ, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, նաև որպես այդ մեթոդիկություն մանկավարժի սիրով շարունակում եմ իմ գործունեությունը նույն դպրոցում: Հուսամ՝ կկարողանամ նոր հաջողություններ արձանագրել իմ մանկավարժական աշխատանքում՝ չնոռանալով սիրուն և արցունքի այն հետքերը, որ մնացին իմ անցած ճանապարհին:
Ինքնակենսագրական այս համառոտագրությունն իրականում պայքար էր, որի բովանդակում թրջվեցին իմ միտքը ու հոգին: Իրականում հեշտությամբ տրվող և ոչ մի բան չի կարող պարծալի ու հյուսել լինել, և քանիցս համոզվել եմ, որ նեղ ու անծուկ ճանապարհներն

են հոգիդ դարձնում ընդարձակ, միտքդ՝ ճկուն, կամքդ՝ անկոտրում... Աշակերտներիս պատեհ ու անառիթ, ուղղակի և անուղղակի պատմում եմ կյանքի «ասֆալտապատ» և «քարքարոտ» ճանապարհների մասին, բայց իմ ու նրանց բանավեճի վերջին հանգրվանը դառնում է ճշմարտության ճանապարհը...
- Ուրեմն, ուսուցիչ դառնալը շեր նպատակն է եղել: շեր մանկավարժական տեղյակությունը, հույզերն ու ապրումները, աշակերտների ու գործընկերների հետ շեր հարաբերությունները, հայրենիքի հետ կապը և ընդհանրապես ձեր զգացումները նախորդել են ամփոփել գրքերում: Ստեղծագործել պարտադիր է ուսուցչի համար:
- Ես հպարտություն եմ զգում այս մի հատիկ բառից, որ կոչվում է «ուսուցիչ», և մեկ այլ հպարտության զգացում գերիշխող է դառնում «Արցախի ուսուցչուհի» անվան կոդից, երբ այսքան մոտիկ ենք ապրում սահմանից:
Վերջին տարիներս ուսուցչուհու համար բացվեց նաև մանկավարժական արարումների մի նոր ոլորտ՝ իմ մասնագիտությանը զուգահեռված գեղարվեստական ու գրականագիտական վերլուծություններով, գնահատանքի խոսքերով... Այն հնարավորություն սովեց նաև ի մի բերել բոլոր նյութերը գրքերի տեսքով՝ իմ աշակերտների մտքերի, արտահայտած կարծիքների ամփոփմամբ, որտեղ երևում է նաև ման-

ԿԵՆՍԱԳԻՐԸ

կավարժը տարբեր ստեղծագործություններին՝ պատկերավորման արվեստի վերլուծություններով, գրողի մասին իր խոսքով, գեղարվեստական մտքի խորությամբ, սահմանները դարձրեցի ուսուցիչների, ինձ հետ աշխատող անհատականությունների մտքերով, աշխարհայացքով ու կենսադիրքով:

Մանկավարժի աշխարհը լրացնում են ոչ միայն աշակերտները, այլ նաև իմ գործընկերները: Իմ աշխատանքային օրը նաև նրանց հետ է, երբեմն հասկացված, երբեմն՝ գուցե չհասկացված, երբեմն՝ արտաբուխ խոսքերով, ժպիտներով առատ, երբեմն՝ մտքերի մեջ, հուզական խռովքով... Սա մի ուրիշ աշխարհ է, որտեղ գրեթե բոլորս Արցախյան պատերազմ ենք տեսել, բռնազաղթի ճանապարհ անցել, վերադարձել հայրենիք, նոր աշխատանքի կցվել, սերունդներ դաստիարակել, նորից ապրիլյան ահուսարսափ ապրել, նոր տարիանում տեսել, բայց նորից մնացել այս հողին կառչած: Հոգևոր այս մոգական ուժ ունի: Այն այլևս սրբացված է ընկածների բանկ արյան շաղախով և դարձել է ողջերի արժանապատվությունը: Եվ հենց այս հողի նկատմամբ ունեցած սիրուց էլ ծնվել են խոսքերս յուրաքանչյուրի մասին, ովքեր նաև կորուստներ ունեն իրենց հոգում, հարազատների հանձնի հիշատակ:

«Մանկավարժի օրագիր»-ն ունի ընթացք ու շարունակություն, և դեռ անհայտ է այդ շարունակականության ավարտը, քանի դեռ մանկավարժիս համար տեսանելի են իմ դպրոցն ու այնտեղ դասավանդվող աշակերտները, ուսուցիչներն ու նրանց վարած դասերը, հայրենի սահմանակից բնակավայրիս ապրումներն ու մանկավարժիս անհանգիստ տվյալները... Սա գիրք է, որ դեռ պիտի գրվի, քանի դեռ հնարավորություն ունեն իմ գրիչը ծառայեցնել հանրությանը, ովքեր էլ նրանք լինեն, դա լինի իմ շրջապատում, իմ դպրոցում, իմ հայրենիքում, թե հայրենիքից դուրս՝ Սփյուռքում:

«Մանկավարժի օրագիր»-ը դարձավ ինձ հարազատ ու շատ մտերիմ: Այն ինձ հարազատ դարձած դպրոցն ընդօրոյս կյանքն է, դասարանից դասարան մտնող ուսուցիչ աշխատանքային գործունեությունը, որը մտահոգ է սերնդի վաղվա օրով, ընդհանրապես՝ նրա ճակատագրով: Լավատեսությունը փայլում է այս օրագրում, որ միտված է նոր սերնդին տանելու դեպի լուսավոր ապագա: Սա գիրք է, որ հպարտության և ուրախության նրբերանգներով տեսանելի է դարձնում մեր դպրոցականների և ուսուցչուհու մանկավարժական կյանքը, որ ինչքան ուսանելի, նույնքան դաստիարակչական է: Այս օրագիրը բացահայտում է աշակերտի և ուսուցչի մի նոր հարաբերություն, որ շատ մտերմական է, փոխադարձ հասկացվածության բարձր մակարդակով, դեռահասների անձնական հույզերի անհանգիստ վայրիվերումներով, մանկավարժի ուղղորդող խորհուրդներով: Այստեղ գործող անձերը դպրոցականներն են, որոնք տեսանելի են իրենց շարադրություններով, մտքերով, կարծիքներով, ապրած անհանգստությամբ, միմյանց հանդեպ ունեցած վերաբերմունքով:

Սա գիրք է, որ բացում է ընթերցողի համար ուսուցչի գործունեության լայն տարածքներ: Այս գիրքն ազդարարում է ուսուցչի բարդ ու դժվարին աշխատանքը, որ բազում նրբություններ ունի՝ կախված աշակերտի ու ծնողի հետ ունեցած հարաբերություններից, որոնցից էլ ծնվում են ուսուցչի հանդեպ ակնածանքն ու այն դրական բոլոր որակները, որի պատասխանատուն հենց ինքն ուսուցիչն է՝ իր մանկավարժական ու հոգեբանական շշմարիտ ուղղվածությամբ: Այս գիրքը գալիս է նաև բարձրաձայնելու կրթության ոլորտում առկա թերությունների մասին:

Սա գիրք է, որտեղ արժևորվում է աշակերտի անհատականությունը՝ անկախ նրանից, թե նա ինչ կարողությունների և ընդունակությունների տեր է: Այստեղ չեն տարբերակվում աշակերտներն իրենց սովորելու շնորհով, նրանք հավասարապես ուշադրության կենտրոնում են, ուսուցչի կողմից սիրված: Ազատ են նրանք ուսուցչի հետ ունեցած հարաբերություններում, նաև՝ հարգալից ու համակրանքով լեցուն:

Այստեղ ի ցույց են դրվում դեռահասների տարբեր հուզական վիճակներ, որոնց գուգահեռվում է մանկավարժի կողմից հնարավոր մոտեցման ու հարթեցման ճանապարհը: Այստեղ ուսուցիչը երևում է նաև դասերից դուրս իր անձնական և անանձնական ապրումներով, նա հասարակության անդամ է, իր երկրի քաղաքացին, նաև՝ մտահոգ այդ երկրի ապագայով: Այս գիրքը գալիս է «ոչ» ասելու մանկավարժական քարացած ձևերին, սա գիրք է, որտեղ ուսուցիչն ինքն է իր համար ստեղծում դյուրընկալ պայմաններ ու այդ սիրով այն փոխանցում իր առջև նստած դեռահասներին:

Այս գիրքը մանկավարժիս անցած աշխատանքային կենսագրությունն է, որ ծնվեց ու դարձավ ուսուցչի ու աշակերտի համատեղ գործունեության դպրոցական տարեգրություն:

- Դուք նաև ակտիվ եք սոցցանցում, ի՞նչ է այն տալիս Ձեզ:

- Հոգևոր խորքում մեծ ձգտում ունեի՝ գտնել մի ասպարեզ, որտեղ ասելիք ունենամ, նաև՝ լսարան: Ու գտա այն, գտա այս ընկերական տարածքը, որ իմ հոգու խնդրումները տեսանելի դարձնեմ նրանց, լսեմ կարծիքներ, մտքեր փոխանակեմ...

Տարիների իմ մանկավարժական գործունեությունը դարձավ տեսանելի իմ շրջապատում, կամաց-կամաց այդ տեսանելիության տարածքներն ընդարձակվեցին, որտեղ դպրոցականներ կան կողքիս, ինձ հասկացող դեռահասներ, ու սեր կա մեր միջև, գեղեցիկ հարաբերություններ: Բայց լայնացավ այդ տարածքը, ու աշխարհից հեռու ծվարած Մարտակերտը տեսանելի դարձավ իր դպրոցով, իր աշակերտներով, այնտեղ դասավանդող ուսուցիչներով, իր անհանգիստ ապրումներով, ապրիլյան պատերազմական օրերով...

Ես ո՞վ էի, որ ձգտում էի գրել, ու իմ գրիչն իր արժանվույն տեղն ուներ այն հեռավոր աներիկյան կայքի «Մանկավարժի անկյուն» գոլորտիկ տարածքում, որտեղ բարեհամբույր մարդկանցով շրջապատված՝ չհամարեմ ի տեղ դասած շատերին: Ես ո՞վ էի, դասարանից դասարան մտնող ուսուցչուհիս, որը 92-ի փախստականի պիտակ ուներ իր հետ, օտար պիտեի սառնություն, հայրենադարձի դժվարին կացություն, որ դպրոց էր մտել ու ցանկանում էր իր նորարարությամբ մի նոր ազատություն տալ դեռահասներին:

Իմ էությանը ես ազատ եմ, ու իմ ազատությունը տարածեցի ամենուր, որ իմ առջև նստած աշակերտն իր խոսքը հնչեցնի համարձակ, որ պիտի դառնար մեր երկուսիս միջև ազատ հիմքերի վրա դրված երկխոսություն:

Ուսուցչի ու աշակերտի միջև փոխադարձ սիրո ու հարգանքի վրա ստեղծված այս իրաշալի հարաբերությունը տեսանելի դարձրի, որը կդառնար մանկավարժի փորձ, ուսումնական գործընթացի գեղեցիկ նվիրում, գուցե նաև ուրիշների սեփականությունը՝ որպես ուղեցույց դրանով առաջնորդվելու դեպքում: Ես ուսուցիչ էի, ով սիրում էր իր մասնագիտությունը և այդ սիրով տեսանելի դարձնում իր աշակերտների հոգում կատարվող տեղավորումը, որ կապված էին հիմնականում սահմանափակ բնակավայրիս անհանգիստ ապրումներով:

Ամեն օր սոցցանց են մտնում, առաջին հերթին քացուն են իմ էջը՝ այս յուրահատուկ լույսի աղբյուրի: Այն լրատվության հիանալի միջոց է, տեղեկատվական դաշտ, միայն թե ճիշտ և նպատակային օգտագործվի: Փիտեղիքների լավագույն շտեմարան է, հետազոտական որոնումների հուսալի աղբյուր՝ ինքնակրթության ճանապարհին: Նորօրյա ամանակագրություն է տարածական հեռավորության վրա՝ ժամանակի մեջ տեղավորված, ինքնահաստատման, ինքնաճանաչողության զարգացման ուղի՝ կատարած հղումների, գնահատանքների, իրար հետ կիսվելու արդյունքում: Այն ասպարեզ է մրցույթների, բանավեճերի, նաև՝ մտածական ունակություններ դրսևորելու, ստեղծագործելու, հետաքրքրություններն ընդլայնելու համար: Ցանկացած հարթության շրջանակներում և փոխադարձ հղումների արդյունքում յուրաքանչ-յուրս յուրովի շփվում ենք մարդկանց հետ,

ընթերցում նրանց գրառումները, կարծիքներ հայտնում, մեկնաբանություններ կատարում՝ մասնագիտական կամ հասարակական կյանքին առնչվող հարցերի շուրջ: Այս յուրահատուկ ընկերությունը, որը նաև որոշ դեպքերում արտաքինապես անձանաչելիության թողով է ծածկված, մարդկային հիանալի հարաբերությունների հաստատման ասպարեզ է ինձ համար, առողջ միջավայր՝ անկախ սեռից և տարիքից: Սոցցանցն էլ միջավայր է, որտեղ մաքրություն է պետք: Պետք է մաքուր պահենք այդ միջավայրը, որտեղ կերպարներ են ստեղծվում, իրական մարդկային կերպարներ՝ ազնիվ մղումներով, հաստատուն քայլերով, բարի կամքի դրսևորումով, կերպարներ, որոնք, տարածություն ու ժամանակ չճանաչելով, մոտենում են իրար, դառնում հարազատ:

Երբևէ չեմ կարողանում հաշտվել այն երևույթի հետ, երբ սոցցանցը դառնում է զրպարտության, անարգանքի, մարդկանց վարկաբեկելու հարթակ՝ երբեմն՝ անանուն, երբեմն՝ անուններով տարբեր հասցեատերերի քարկոծելու համար: Այս միջավայրն էլ մաքրություն է ուզում մեզանից՝ մաքուր խոսք, մաքուր վերաբերմունք, մի քիչ՝ տնավարի, նաև՝ հյուրընկալ, երբեմն՝ պաշտոնական կամ հարգալից՝ դրանով իսկ յուրովի մեր կերպարն ի ցույց դնելով անձեքին: Ասում են նաև, որ մարդու լեզուն և բնավորությունն իրար հետ ամիսգեղեցիկ կապված են: Այդ բնավորությունը նաև նկատելի է այս տարածական միջավայրում, որտեղ մեզ համար կերպարներ են ստեղծվում: Այստեղ մենք ազատ ենք մեր շրջապատը ձևավորելու և ընկերների ընտրության հարցում, նույնպիսի ազատություն նկատելի է նաև մեր կարծիքներում, որոնց ոչ ոք իրավունք չունի բռնանալ:

- Ի՞նչ է Ձեզ համար ծննդավայրը:

- Մարտակերտ... այստեղ հավերժափուլ մեղեդիներ կան, լուսե երազներ:

Սա մեր քաղաքն է, մեր հարազատ բնօրրանը՝ երկու պատերազմ տեսած մեր բնակավայրը: Ավելի քան մեկ տարի՝ 1992-93 թվականներին, եղել է թշնամու ձեռքին, բռնազաղթած ժողովուրդը՝ տեղահան եղած: Կամաց-կամաց նորից եկան, նորից տուն և տեղ վերականգնեցին, ու նորից մի նոր ապրիլյան պատերազմ, իր հետ մի նոր տարիանում ու մի նոր սարսափ: Անսահման սեր կա և հույս, խռովք ու ընդվզումներ այստեղ ապրողների հոգում: Դա խաղաղության հաստատման և պատերազմի դեմ ուղղված բոլորիս ազատաբաղձ կոչն է, որ ամեն օր՝ հենց էլ այս հողին ամուր կառչած մեծերի ու փոքրերի շուրթերով:

Մենք՝ մարտակերտցիներս, ապրում եք այստեղ, որովհետև ոգի կա, հայի հավատ, սեր... Սեր կա հողի, օջախի, անգամ փոշու, իսկ ավերակների հանդեպ տածած մեր մեծ սիրո մեջ սարսուռ կա...

Այստեղ ազնվացնող և ջերմացնող հոգիներ կան, շատերը՝ խառնվածքների բազմազանությամբ, մարդկային խորունկ և հմայիչ մտորումներով, որ լուսավոր ու պայծառ հայացքներով իրենց անցնելիք ճանապարհին կարողանում են կերտել փայլուն ու գեղեցիկ կերպարներ՝ համոզված, որ Տեր Աստվածը կենց դրա համար է մարդուն կյանք պարգևել:

Հպարտության զգացում ունեն քաղաքիս ու այստեղ ապրողների նկատմամբ, առավել ևս, երբ գիտեմ, որ ուշադրության և հոգատարության կարիք ունենք մենք, որ համար կամքով ընդունել ենք այստեղ ապրելու պատգամը: Ասում են՝ լավատեսությունը մեծ մարդկանց շքեղությունն է, ասա այդպես էլ ապրում ենք մենք ոչ իրական, բայց հոգու շքեղության մեջ, որտեղ հավերժահույզ մեղեդիներ կան, անմահների հիշատակ, որ կամաց-կամաց սուզվում են հույզերիդ աշխարհը, լուսավորում միտքը և տանում քեզ դեպի երազների մի նոր աշխարհ:

Սահմանին մոտ հողի՝ արկերից ճաքճաքած հառաչանքներն են մեզ հասնում, և զգում ենք, որ այդ պահին մարդը հերոսանում է ոչ միայն պատերազմի առաջին գծում, այլև իր հարազատ հողի վրա, և մարդու մեջ խոսում է հողի ձայրը: Սահմանի մոտ այսպես գոյատևելու ապրելակերպն այդ մենք չենք ընտրել, այստեղ բո-

լորս էլ՝ մեծից փոքր, նվիրյալներ ենք: Եվ այսպես հողի ձայնը ամեն օր արցունքից ծնված մի փքրիկ հեքիաթ է հյուսում, որ արձագանքում է հոգուս կանչերի լուսե-լուսավոր գալիք օրերին՝ մարդկանց, աշխարհին, ամենքին ուղղված: Ես հավատում եմ գալիք օրերին:

- Ապրելու Ձեր բանաձևը:

- Հոռետեսությունն ինձ համար չէ, միշտ էլ ունեցել եմ ներդաշնակ ու կատարյալ հասարակության մեջ ապրելու երազանք ու միշտ էլ հոգուս խորքում փայփայել եմ այն իդեալականը, որ այս փոքր բնակավայրում պետք է մեկս մյուսի նկատմամբ ունենանք: Միշտ էլ լուսավոր իդեալի երազանք եմ ունեցել՝ անտեսելով մեր շրջապատի արատները, միշտ էլ բռնկվում է եղել իմ անցած ճանփան, բայց հիմա կյանքի մեղմ ու համարձակ ընթացքն էմ նախընտրում, նայում խոհերիս ընթացքին, ձգտում կրակոտ զգացումներս հակադրել մեղմորեն օրորվող մտորումներին:

Շրջապատում միմիայն գեղեցիկը տեսելու և արարելու ցանկությունը երբեմն բախվում է իրականությանը, որտեղ սպասումը մարդկային ներդաշնակության հասնելու համար դառնում է անիրագործելի:

Ես շարունակում եմ կապված մնալ իմ հարազատ երկրի, իմ շրջապատի, իմ ասպարեզ ու ապրելիք տարիների հետ, իմ կյանքը շաղախված է մեծագույն սիրով ու հարգանքով: Հետևապես պետք է ապրենք միմիայն ճշտի սկզբունքով, բարին արարելու աստվածահաճու էությանը:

- Հոգեսանց մի հարց՝ ուսուցչին ու աշակերտը մո՞ւյն տարածքում չեն:

- Տարիներ շարունակ այն համոզմունքին եմ մնացել, որ Արցախի կրթության համակարգը համալրված է լավագույն ուսուցիչներով, որոնք արժանապատվորեն են կատարում իրենց վերապահված առաքելությունը մատուց սերնդի ուսուցման և դաստիարակության գործում՝ ի մասսա մեր երկրի հզորացման ու բարգավաճման: Իսկ այսօրվա սերունդը լի է հետաքրքրություններով, սեփական կարծիքով, ազատամիտ գաղափարներով, նա վաղը այս երկրի արժանի տերն է դառնալու, նաև համոզված եմ, որ ազատություն սիրող այսօրվա սերունդն է կերտելու ազատ ու անկախ Արցախը:

Այսօր մեր առջև նստած են բազմակողմանիորեն զարգացած, տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետող աշակերտներ: Այս առումով այսօրվա ուսուցիչը նույնիսկ, կարելի է ասել, մի քանի քայլ հետ է մնում աշակերտից: Չմոռանալով նաև ավանդական կրթության որոշ առավելություններ՝ հաստատականորեն կարող եմ ասել, որ ժամանակները փոխվել են. մենք չենք կարող նախկին ստրկամիտ գաղափարներով դաստիարակել մեր աշակերտներին, որ հատուկ է եղել խորհրդային տարիների կրթությանը: Չեն ուզում գերծնալ նաև այն բոլոր թերություններից, որ առկա են այսօրվա կրթության ոլորտում՝ կապված բուհական ընդունելության և այլ երևույթների հետ, բայց բարձրաձայն կարող եմ ասել, որ մենք ձևավորում ենք ապագա արհեստավորին, շինարարին, բժշկին, ուսուցչին, գիտնականին և շատ-շատերին՝ շարունակելով մեր նախորդների առաքելությունը:

Իսկապես, ստեղծվել է մի վիճակ, երբ ուսուցիչն ու աշակերտն իրար չեն հասկանում: Այստեղ է, որ սրությանը է դրվում մանկավարժի բարձր համոզմունքների ու կերպարային ազդեցության հարցը: Ես թերևս շարունակում եմ մնալ այն համոզմանը, որ ուսուցիչը պետք է հասնի այնպիսի հեղինակության, որի հետ նույնանալու խորը ցանկություն ունենա աշակերտը:

Համոզված եմ, որ մեր նկատմամբ հարգանքն ու պատիվը ձեռք ենք բերում մեր իսկ մանկավարժական ճիշտ գործունեությամբ, դժվարությունների հաղթահարման մեր ընտրած ճիշտ ճանապարհով, դեռահասների հետ ունեցած փոխադարձ հասկացվածությամբ, ծնողների հետ հարաբերությունների անհատական մոտեցմամբ:

Արժանի լինենք մանկավարժի կոչմանը, այլապես կյանքի շատ ու շատ ոլորտներում կարող ենք պարտություն կրել:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ

Յրաժեշտ տալով անցնող տարվան՝ ընդունված է ամփոփել այն, գնահատել ձեռքբերումները, չանտեսել անհաջողությունները, հստակ նպատակներ դնել և ծրագրավորել եկող տարվա անելիքները:

Արցախի մարտարվեստների ասոցիացիայում դեկտեմբերի 30-ը նշանավորվեց տարին ամփոփող միջոցառմամբ: Ասոցիացիան շրջափակի արդյունքներ է արձանագրել անցնող 2018 թվականին կատարած գործունեությամբ: Մարզական այդ կառույցը համախմբել է 217 մարզիկի, որոնք պարապում են մուայթայ և խառը մենամարտեր (MMA) մարզաձևերով: Մայրաքաղաքից բացի մասնաճյուղեր կան Քարվաճառում և Ասկերանի շրջանի Այգեստան համայնքում: Մասնակցելով միջազգային խոշոր մրցաշարերի՝ 2018-ին մեր մարզիկներին հաջողվել է զբաղեցնել մրցանակային տեղեր: Եվրոպայի երիտասարդների առաջնությունում Արման Գալստյանը և Ռազմիկ Գրիգորյանը զբաղեցրել են 3-րդ պատվավոր տեղը: Խառը մենամարտերի (MMA) Եվրոպայի մեծահասակների առաջնությունում Թաթուլ Ավագյանը զբաղեցրել է 3-րդ տեղ: ՌԴ Սանկտ Պետերբուրգում կայացած Խառը մենամարտերի (MMA) երիտասարդների աշխարհի առաջնությունում Մարատ Բարսեղյանը նվաճել է 2-րդ, իսկ Դավիթ Քոչարյանը՝ 3-րդ մրցանակային տեղ:

Ասոցիացիայի 10 լավագույն մարզիկ-

րար է գնահատում: Կենտրոնանալու են նոր մասնաճյուղերի բացման վրա: Ավելի լավ արդյունքներ ունենալու համար Գ. Արաբալյանը կարեւորում է մարզիկների հաճախակի մասնակցությունը միջազգային մրցումներին: 2019-ին սպասվում են մարզական մի շարք միջոցառումներ, որոնց կմասնակցեն մարզիկները:

2018-ի մարզական հիշարժան իրադարձություններն ամփոփեցինք նաեւ Արցախի ազգային ավանդական կարատե-դո ֆեդերացիայի մարզիչ և մարզիկ Տիգրան Գեւորգյանի հետ: Ֆեդերացիայում կոփվում է 220 մարզիկ: Ընդ որում, գործում են մասնաճյուղեր Իվանյանում, Ասկերանում, Ստեփանակերտի 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ դպրոցներում, Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանում: Տարվա նշանավոր իրադարձությունները եր ֆեդերացիայում մարզվող չորս մարզիկի գոտեւորման քննության հաջող հանձնելն ու սեւ գոտի առաջին դաս ստանալը: Տ. Գեւորգյանի մանրամասնմամբ՝ սկսած 2007 թվականից, ամեն տարի սեմինար-հավաքներ վարելու և գոտեւորման քննություն ընդունելու նպատակով երեւան է ժամանում Աշխարհի ավանդական կարատե-դո ֆեդերացիայի նախագահ, սեւ գոտի 8-րդ դաս Վլադիմիր Կվիչենսկին: Նրա անունից շնորհված վկայականները միջազգային կարգ ունեն: Արցախի մարզիկները պատիվ ունեցան սեւ գոտու քննությունը հանձնել նրա մոտ: Ֆեդերացիայի անդամները մասնակցեցին նաեւ Վ.Կվիչենսկու վարած սեմինարին: Ֆեդերացիան կազմակերպել էր ավանդույթ դարձած՝ Էդմոն Բարսեղյանի հիշատակին նվիրված հուշամրցաշար Ասկերանում, որին մասնակցել են ֆեդերացիայի 60 պատանի մարզիկներ: Անց է կացվել ԱՀ առաջնություն ավանդական կարատե-դո մարտարվեստով, որտեղ լավագույն արդյունքներ ցուցաբերած մարզիկները մայիսի սկզբին մասնակցել են ՀՀ Արարատի գավաթի միջազգային առաջին առաջնությանը և զբաղեցրել մրցանակային տեղեր: Միջազգային մրցաշարին մասնակցել են եվրոպական 6 պետություններ ներկայացնող մարզիկներ: Արցախից մասնակցած մարզիկներից 18+ տարիքային կարգում մրցանակային տեղեր զբաղեցրին Տիգրան Գեւորգյանը (3-րդ տեղ) և Ֆուկու-գո մրցածեից), Անդրեյ Պետրոսյանը և Արմեն Իսրայելյանը թիմային էմբուկումիտե մրցաձևում զբաղեցրել են 1-ին, իսկ Անդրեյ Պետրոսյանը նաեւ կումիտե մրցաձևում 3-րդ տեղ արձանագրեց:

Պատանիների և ավելի փոքր մարզիկների կարգում մրցանակային տեղեր եղան: Հունիսին ՀՀ օլիմպիական կարատեի առաջնությանը մասնակցելով՝ եղան կատա մրցաձևում տարբեր տարիքային խմբերում մրցանակային տեղեր զբաղեցնող մարզիկներ, իսկ 1-ին տեղի արժանացավ մեկ մարզիկ՝ 12-13 տարիքային խմբում: Սեպտեմբերի 13-14-ը ֆեդերացիայի մարզիկները մասնակցեցին «Երեւան-օփեն» միջազգային մրցաշարին շտոկոլան մարզաձևով: Մեծահասակների տարիքային խմբում կատա մրցաձևում հանդես եկած Տիգրան Գեւորգյանը զբաղեցրեց 2-րդ տեղ, պատանիների կարգում երիկ Ավանեսյանը՝ 3-րդ տեղ: Դեկտեմբերին Թեհրանում (Իրան) կայացած Iran Zamin

րից: Ուրեմն, օլիմպիական կարատեում լավ արդյունքներ ունենալու համար պետք է ուշադրության կենտրոնում պահել ավանդական ոճերը: Տեղեկացանք նաեւ, որ Տիգրան Գեւորգյանը և ԱՀ ազգային ավանդական կարատե-դո ֆեդերացիայի եւս 3 մեծահասակ մարզիկներ անդամագրվել են ՀՀ կարատեի կոնֆեդերացիայի կազմում, ինչը նրանց հնարավորություն կտա մասնակցել այնպիսի մրցաշարերի, ինչպիսիք են «Երեւան-օփեն»-ը, Սեւ ծովի, Իրանի միջազգային առաջնությունները, Տոկիոյի աշխարհի առաջնությունը: Ընդ որում, մասնակցության ծախսերը հոգալու է կոնֆեդերացիան: 2019-ը ֆեդերացիայի մարզիկների համար հազեցած կլինի տարբեր մրցաշարերի անցկացմամբ: Մարտին կկազմակերպվի Արցախի ավանդական կարատեի առաջնություն, որին կմասնակցեն նաեւ մարզիկներ ՀՀ մարզիկները: Արիկին կմասնակցեն ՀՀ ավանդական կարատեի առաջնությանը, որտեղ լավագույն արդյունք ցուցաբերած 8 մարզիկ մայիսին կմասնակցի Արարատի գավաթի 2-րդ միջազգային առաջնությանը և ավանդական կարատե դոից: Ապրիլ-մայիսին կմասնակցեն ՌԴ-ում կայանալիք Karate evolution 3-րդ միջազգային առաջնությանը: Հունիսին սպասվում է Ավանդական կարատեի աշխարհի գավաթի խաղարկություն, հոկտեմբերին՝ Եվրոպայի առաջնություն:



Ներ պարզեւատրվել են պատվոգրերով ու նվերներով, որոնք հանդիսավոր հանձնել է ասոցիացիայի նախագահ և մարզիչ Գարեգին Աղաբալյանը: Նրա խոսքով՝ նոր տարում կունենան նոր անելիքներ Արցախում մարզաձևերի զարգացման համար: Անցնող տարվա ձեռքբերումները բավա-



Karate Cup միջազգային մրցաշարին մասնակցեցին արցախցի երեք մարզիկներ: Մրցաշարին մասնակցում էր բոլոր տարիքային խմբերում շուրջ 1400 հոգի՝ 9 սահական պետություններից: Մեր համերկրացի մարզիկներ Տիգրան Գեւորգյանը, Տիգրան Հակոբյանը, Նիկո Պողոսյանը զբաղեցրել են 3-րդ մրցանակային տեղ: Տ. Գեւորգյանի խոսքով՝ տարվա ձեռքբերումներն այնքան էլ շատ չեն: Ավանդական կարատե մարտարվեստին տիրապետելու մակարդակով մեր սաներն իրենց մրցակիցներին չեն զիջում միջազգային մրցաշարերում: Բայց ավելի լավ արդյունքներ ցույց տալու համար անհրաժեշտ է ավելի շատ մասնակցել խոշոր մրցաշարերի, սեմինարների, ձեռք բերել հարուստ փորձ: Ծագող ֆինանսական խնդիրների պատճառով անհնար է դառնում մեր մարզիկների մասնակցությունն ապահովել արտերկրում անցկացվող որոշ մրցաշարերի: Պետական աջակցությունը մասնավորապես ուղղված է օլիմպիական կարատեի զարգացմանը: Մինչդեռ պարզաբանվեց, որ օլիմպիական կարատեն սնուցվում է ավանդական՝ շտոկոլան, սիտոբյու, գոժյուբյու, վադերյու ոճե-

կություն, հոկտեմբերին՝ Եվրոպայի առաջնություն: Բացի մրցաշարերից ֆեդերացիայում կազմակերպվելու են տարբեր միջոցառումներ: Հիմնականում է, որ 2019-ին կազմակերպվեն ինքնապաշտպանության դասընթացներ ոչ միայն մարզիկների, այլև առանձին քաղաքացիների համար: Դասընթացները կվարեն ֆեդերացիայի փորձառու մարզիչները: Ինքնապաշտպանություն սովորելու և սթրեսային իրավիճակներում ճիշտ որոշում կայացնելու, անհրաժեշտ գործողություններ կատարելու հմտություն ձեռք բերելու համար բացվում են հիանալի հեռանկարներ: Արցախի Հանրապետության քաղաքացիների համար նորույն է պահանջված լինելով՝ այդ դասընթացներն ամենայն հավանականությամբ դրական արձագանքներ կունենան և կհամախմբեն շատ մասնակիցների: «Լուսարար»-ը շարունակում է հետևել Արցախի մարզական լուրերին և իրադարձություններին՝ մաղթելով բոլոր ծրագրերին բարի իրականացում, նորանոր հաղթանակներ:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՆՈՐՇԵՆԻ ԵՐԵՆԱՆԵՐԻ ՃԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ

Հունվարի 13-ին Նորշենում տոնական տրամադրություն էր: Հին Նոր տարուն երկար էին սպասել ինչպես երեխաները, այնպես էլ նրանց ծնողները:

Արդեն երկրորդ տարին է, ինչ դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ Արա Հարությունյանի նախաձեռնությամբ աշակերտները նամակներ են գրում Չմեռ պապին, որը նվերների տեսքով իրականացնում է նրանց ցանկությունները:

Չմեռ պապին ուղղված երեխաների նամակները Ա.Հարությունյանը տեղադրել է ֆեյսբուքյան էջում, որոնց արձագանքել են նվիրատուներ և ուղարկել հասցեատերերին:

Նոր տարին սպասված տոն է հատկապես երեխաների համար: Նրանք անհամբեր սպասում են այն նվերներին, որ Չմեռ պապն է բերելու: Հին Նոր տարուն նվիրված հանդիսավոր միջոցառման բացման խոսքում կազմակերպիչ և վարող Ա.Հարությունյանը շնորհավորեց բոլորի Ամանորը, մաղթեց, որ 2019 թվականը լինի նոր ձեռքբերումների ու հաջողությունների տարի: «Դասավանդիր, Հայաստան» ծրագրով Նորշեն ժամանած ֆիզիկայի երիտասարդ ուսուցիչը, գիտության հրաշքերի գաղտնիքները երեխաներին սովորեցնելուց բացի, զարգացնում է նրանց մշակութային ներուժը: Ազգանվեր ուսուցիչ ջանքերի շնորհիվ գյուղում հիմնվել է «Մոնթե» ազգագրական պարի խումբը, որն ակտիվորեն մասնակցում է մշակութային տարբեր միջոցառումների և արձանագրում հաջողություններ:

Թե ինչպես առաջացավ Չմեռ պապին դիմելու գաղափարը, Ա.Հարությունյանը մեկնաբանեց այսպես. «Երեխաների առօրյան հետաքրքիր դարձնելու համար նախաձեռնեցի ու կազմակերպեցի այս ամենը: Իսկ տոնական օրն ավելի հետաքրքիր, ուրախ և տպավորիչ դարձնելու նպատակով հրավիրեցի նաև մեր լավ ըն-

կերներ՝ լիբանանահայ երգիչ Գևորգ Հաջյանին, արցախցի դուդուկահար Հակոբ Բաբայանին, նվիրատուներին: Այս ամենը մեծ ոգևորություն պարզեց երեխաներին»,- ասաց նա:

Համերգի ընթացքում ամանորյա կատարումներին ու դալիժում տիրող տոնական մթնոլորտին ձուլվեցին Գ. Հաջյանի



ազգագրական երգերը, հայկական «Քոչարի»-ն ու «Յարիտշտա»-ն: Եվ ահա եկավ սպասված պահը՝ նվերների պարկը շալակին ներս մտավ հրաշագործ Չմեռ պապը: Առաջինից մինչև տասներկուերորդ դասարանցիներն անհամբերությամբ սպասում էին

իրենց նվերներին: Փոքրիկ Մոնթեն հեռակառավարման մեքենային էր սպասում, Իգորն ու Ալեքսը՝ ժամացույցներին, իսկ բարձր դասարանցիները նվերների ընտրությունը թողել էին Չմեռ պապի հայեցողությանը, որն առանձնահատուկ առատաձեռն էր գտնվել՝ գրքեր, նկարչական պարագաներ, սպորտային հագուստ և այլն: Ուսման նկատմամբ սեր չունեցող 12-րդ դասարանի Նորայրի համար Չմեռ պապը բերել էր 3 ճագար, որը խոստացավ բազմացնել ու շատացնել նրանց քանակը: Հետաքրքիր իրադանցում տարածվեց ամբողջ դահլիճով մեկ. բոլորի աչքերից երջանկություններ էր առկայծում, իսկ երեխաներս, տեսնելով այն, նույնպես մի պահ մանկացանք՝ հավաքալով ալեհեր պապի գոյությանն ու հրաշագործություններին:

Դպրոցի աշակերտները շնորհակալություն հայտնեցին Չմեռ պապին, ընկեր Արային և նվիրատուներին՝ Հին Նոր տարվա տոնը կրկնակի տոնական և իրենց ցանկություններն իրականություն դարձնելու համար:

Միջոցառման վերջում Ա.Հարությունյանը մեկ առ մեկ շնորհակալություն հայտնեց տոնական միջոցառմանն աջակցած՝ Մարտունու արվեստի դպրոցի սաներին, մշակույթի կենտրոնի ներկայացուցիչներին, Նորշենի «Մոնթե» ազգագրական պարի համույթին, Lit.am կազմակերպությանը, Գևորգ Հաջյանին, Հակոբ Բաբայանին, նվիրատուներին ու ներկայիցին՝ միահամուռ ուժերով կայացած ու իր նպատակին հասած համերգի համար: Նման նախաձեռնություններն ու միջոցառումները, անշուշտ, օրինակելի են և արժանի գովեստի խոսքերի:

Տոնական միջոցառումն ավարտվեց արցախյան ավանդական կուրկուտի հյուրասիրությամբ:

Անուշ ԱՍՐԻԲԱԲԱՅԱՆ

ԳՆԱՀԱՏՆԵ

ԽՈՍՔ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ



Հիշում եմ այսօրվա պես... 2006 թվականին Աշոտ Ջիվանյանը հորս՝ իր ուսուցիչ Բաբկեն Սաֆարյանի հետ մեր դպրոցում էր՝ դպրոցի համար ինչ-որ բան անելու ներքին մղումով: Երիտասարդ ուսուցիչներիս ոգևորությունը անմախառն էր: Դպրոցին աջակցելու ուղիներ էին քննարկվում: Ծրագիրն իսկապես մոտիվացնող էր թե՛ աշակերտների, թե՛ ուսուցիչների համար: Այդ ժամանակ օլիմպիադայի հանրապետական և եզրափակիչ փուլերին մասնակցելը, առավել ևս՝ մրցամակային տեղեր գրավելը քիչ հավանական էին: Յուրաքանչյուրս մեր մեջ գծեցինք որոշակի նշանակալի

չարունակեցինք աշխատել էլ ավելի եռանդով: Ու արդյունքները շատ սպասել չտվեցին: Ա. Ջիվանյանը շարունակեց իր բարեբաղնությունը մինչև կաթիլներով կահավորում, շինարարական, վերանորոգչական մեծածավալ աշխատանքներ՝ ընդգրկելով ճարտարի բոլոր դպրոցները, մանկապարտեզի, դպրոցի կառուցում, համայնքի ճանապարհների բարեկարգում՝ ծավալվելով դեպի հարևան Քերթի և Գիշու համայնքները: Լինել բարի՝ բնավորություն է, սակայն բարություն անելն ընտրություն է և գիտակցված դիրքորոշում կյանքում, որն ուժեղներին է բնորոշ:

Հարգարժան Աշոտ Մաքսիմի, ջերմագին շնորհավորանքներս եմ հղում, ցանկանում ամուր առողջություն, ուրախություն, ընտանեկան ջերմություն: Տարիների հեռավորությունից Դուք այսօր հնարավորություն ունեք հաշվետվություն տալու ինքներդ Ձեզ, Ձեր արածների ու չարածների մասին: Բայց քանի որ Դուք կյանքն ապրում եք ոչ թե անձնական, այլ անանձնական, հասարակական շահով ու հայրենիքին մվիրումով, որի ականատեսն ենք մենք, ուստի կարող ենք ասել՝ չարածներ չկան: Հասարակ գյուղացու ընտանիքում ծնված մեծ ու բարի սրտով հայրենակից, անշուշտ, կարևոր ու նպատակային էին Ձեր ցանկացած նախաձեռնություն, ընտրած ոլորտները՝ կրթություն, մշակույթ, արվեստ, որոնք ոգեշնչման, թարմության, համալրման և ուշադրության կարիք ունեին: Ծնորհիվ այդ ամենի դրական տեղաշարժներ եղան ու կան, և լիահույս եմ՝ դեռ կլինեն: Մեր աշակերտությունը համարձակ ու լուրջ հայտ ներկայացրեց երևանյան մտքի մրցույթներում, օլիմպիադա ասվածում: Մեր սաները, ապրելով հայրենիքում, Ձեր շնորհիվ միայն մասսայաբար կարողացան հայրենաճանաչ դառնալ ամենամյա կազմակերպվող էքսկուրսիաների շնորհիվ: Դուք միշտ լավագույն օրինակ եք եղել ինձ համար նորը փնտրելու, լավագույնը խրախուսելու, հիասթափության ժամանակ սկսածը կիսատ չթողնելու և շարունակելու առողջ տրամաբանությամբ, մարդկանց ձեռք մեկնելու, մեծին հարգելու, փոքրին ուրախացնելու և առաջ մղելու Ձեր կամքով, ձեր ուսուցիչներին գնահատելու և անհատապես

մեծարելու առումով: Երբ հայրենիքից հեռու ես ապրում, սեփական օրինակով եմ ասում, ամեն ինչ սկսում ես վերաիմաստավորել և վերաբնակել: Բայց Ձեր գործը, կատարածը, այդտեղ լինելով էլ, միշտ էլ կարողացել եմ սթափ արժևորել ու գնահատել: Մանկավարժությունն իմ տարերքն է, դպրոցը՝ իմ սերը, որը ինձ ոչ թե երակներում, այլ գարկերակներով է հոսում, և այն մարդը, ով մտածում է աշակերտների կրթության և ավելի՛ն՝ հարմարավետության մասին պետք է առատորեն վարձատրվի: Ասում եմ՝ կյանքը բուներանգի էֆեկտ ունի, ուզում եմ հավատալ դրան, և ցանկանում, որ Ձեր բարության տարողությամբ Աստված վերադարձնի զավակներին, Ձեզ, ընտանիքիդ: Ցանկանում եմ (զուցե Ձեզ համար էական չէ) գնահատված լինեք աշակերտության, կոլեկտիվների, հասարակության, ընդհանրապես գնահատել կարողացող, գնահատելու ունակություն ունեցող մարդկանց կողմից...

Լուսինե ՍԱՖԱՐՅԱՆ
Մանկավարժ,
ք. Մոսկվա

ՇԵՆ ՕՋԱՆՈՒՄ

Վաղուց էի ծրագրել գրել շեն, լիության ու լիաշունչ կյանքով, զրնգուն առօրյայով ապրող առողջ, կենսուրախ ու լուսաշող հեռանկարներ ունեցող տուն-օջախի մասին: Նրա՝ երիտասարդ տիրուհու, վեց տղա-զավակների արժանապատիվ մայր-դաստիարակչուհի, տասներկու անդամներով սեղանի շուրջ նստող մեծ ընտանիքի հարս, տարրական դասարանների ուսուցչուհի Մարինե Աբրահամյանի մասին: Որդիներից ավագը՝ Նարեկը, դպրոցում ուսումնառության տարիներին օլիմպիադաներում փայլող և առաջնակարգ տեղեր զբաղեցնող, ապա՝ Արցախի պետական համալսարանի ուսանող, այժմ ծառայում է Պաշտպանության բանակի շարքերում, երկրորդ Մարտունու արիստագործական ուսումնարանի շրջանավարտ, տրակտորիստ Հայկն է (և՛ պապն է տրակտորիստ, և՛ մեծ պապիկը՝ երջանակախառն քեռի Չերվոնը): Հայրը՝ Տիգրանը, ավտովարորդ է գործառնում: Հայկը ևս պատրաստվում է համալրելու Պաշտպանության բանակի շարքերը: Մյուս որդիները՝ Կարենը, Վահագնը, Գոռը, դպրոցականներ են, Վիգենը՝ նախադրոցական: Մտորում եմ՝ ինչն է պակասում կատարյալ երջանկությունից: Ոչինչ: Եթե յուրաքանչյուր հայ ընտանիքում հասունաման այսքան երեխաներ, ապա երբեք չեն ծերանա, չեն հյուծվի մեր նախկին սովոր դպրոցները: Դպրոցներ, որոնց հարցականներով լեցուն ապա-

զան մտահոգիչ խնդիր է մեր ժողովրդի ու պետության համար: Բազմազավակ ընտանիքի համար պետությունը կառուցել է բազմասենյականոց բնակարան՝ ճարտար-Մարտունի-Ստեփանակերտ տանող ճանապարհին մերձ՝ հարմարավետ ու կենցաղային պայմաններով: Սակայն այսօր մեր ցավով հարցերից մեկը, հատկապես գյուղական բնակավայրերում, երեխաների թվաքանակի նորացումն է, որն էլ հարցականի տակ է դնում մի շարք գյուղական դպրոցների ճակատագիրը: Նման խնդիր առաջն առնելու համար անհրաժեշտ են համապատասխան միջոցառումների որոնում և իրականացում:

Ինձ համակույն են խինդն ու բերկրանքը, երբ ամեն առավոտ մեր տան մոտով անցնող ու դպրոց տանող ճանապարհին տեսնում եմ Մարինե Աբրահամյանին ու նրան ուղեկցող որդիներին և մեր թաղամասի երեխաներին: Նորեն արթնանում է փափազս՝ նոր շնչառությամբ անցնել Գյունե ճարտարի հ. 4 դպրոցը, որտեղ սնցել են իմ դպրոցական ու մանկավարժական աշխատանքի խանդաղատանքով լեցուն տարիները:

Թովկա ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Թոշակառու մանկավարժ
ք. Ճարտար

ԴՊՐՈՑԻՆ ՆՎԻՐՅԱԼԸ



Հարգելի խնամքություն Ցանկանում եմ պատմել մեր՝ Նոր Ղարաչինարի միջնակարգ դպրոցի երիտասարդ տնօրեն Ռուզաննա Ալլահվերդյանի մասին: Նոր Ղարաչինարի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 2002 թվականին և անվանվել ազատամարտիկ Արամայիս Խաչատրյանի անունով: Այդ դժվարին, ցուրտ ու մութ տարիներին դպրոցը գործել է, տվել շրջանավարտներ, ինչի համար շնորհակալություն այդ տարիներին աշխատող տնօրենին և ուսուցիչներին: 2012 թվականի նոյեմբերից դպրոցի տնօրեն նշանակվեց 24-ամյա երիտասարդ մասնագետ (պատմության) Ռուզաննա Ալլահվերդյանը: Հիմնական վերանորոգում չլինելու պատճառով մինչև 2017 թվականը դպրոցն անմխիթար վիճակում էր: Այսօր ես չեմ ցանկանում խոսել աշխատանքային գործունեության ընթացքում այն դժվարությունների մասին, որոնց հանդիպում էր երիտասարդ տնօրենը, այլ ցանկանում եմ ներկայացնել այն արդյունքները և հաղթանակները, որոնք տեղ են գտել դպրոցի կյանքում: Տնօրենի և համայնքի ղեկավարի համատեղ գործունեության արդյունքում, շնորհիվ մոսկվաբնակ խա-

չատրյան եղբայրների ֆինանսական ներդրման, դպրոցը հիմնովին վերանորոգվեց, կարելի է ասել, եվրոպական չափանիշներին համապատասխան, ինչն այսօր նպաստում է դասապրոցեսի որակին: Տիկին Ալլահվերդյանը կարողացել է ստեղծել կուռ և համերաշխ կոլեկտիվ, որտեղ յուրաքանչյուրը շատ լավ գիտի իր անելիքը, որտեղ համերաշխ է ոչ միայն աշխատանքային կոլեկտիվը, այլև աշակերտականը: Ցանկացած հարց լուծվում է համատեղ ուժերով: Իր յոթամյա գործունեության ընթացքում բավականին առաջընթաց է ապրել դպրոցը, ավելի եռուն, ակտիվ և աշխույժ է դպրոցում կյանքը: Տնօրենի ջանքերի շնորհիվ այսօր դպրոցը 90%-ով համալրված է անհրաժեշտ մասնագետներով, 4 շրջանավարտ սովորում է բուհում, 2-ը՝ ռազմական և բժշկական քոլեջներում: Ձեռքբերումները բազմաթիվ են:

Մեր դպրոցի բոլոր մանկավարժներին, աշխատակիցներին, աշակերտներին և ծնողներին կողմից ցանկանում ենք շնորհավորել մեր երիտասարդ տնօրենին՝ ծնողյան տարեդարձի առթիվ, ցանկանալ ամենայն բարիք, բեղուն աշխատանք և բազմաթիվ հաջողություններ: Եթե յուրաքանչյուր տնօրեն դպրոցին մվիրվի այնպես, ինչպես տիկին Ալլահվերդյանն է, մեր կրթության ոլորտը միմիայն կշահի: Աստված օրհնի և պահպան լինի:

Նոր Ղարաչինարի միջնակարգ
դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Շնորհավորանք
ԻՐ ԳՈՐԾԻ ՀՄՈՒՏ
ԳԻՏԱԿԸ



Աշխարհը խոսում է մաթեմատիկայի լեզվով: Թվում է՝ ասույթը վերաբերում է մաթեմատիկական թվերին, հավասարումներին, թվաբանական հաշվումներին, թեորեններին, բայց պատկերացումները կախված են նրանից, թե դպրոցում մաթեմատիկայի գիտակցի ինչպես է մատուցում առարկան: Այդ առումով դասավանդման յուրահատուկ մեթոդիկայով և մատչելի ու ճիշտ ներկայացմամբ առանձնանում է Ասկերանի շրջանի Շոշի Ս. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի բազմամյա փորձառու մանկավարժ Ժանետա Միրզոյանը, որը վերջերս նշեց իր հոբելյանը:

Ծնվել է 1959 թվականի հունվարի 1-ին ԼՂ Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը, որն ավարտելուց հետո 1979թ. աշխատանքի է անցել հայրենի գյուղի դպրոցում, իսկ 1980 թվականից առ այսօր աշխատում է Շոշի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի:

Մեծ է ընկեր Միրզոյանի դերը Շոշի դպրոցի աշակերտների ուղեղում մաթեմատիկայի դրվածքը դնելու և այն ճիշտ ուղղությամբ զարգացնելու գործում: Կենսուրախ, աշխույժ, ժպտերես ուսուցչուհին կարողանում է մատչելի եղանակներով մատուցել խրթին վարժություններն ու խնդիրները, բացատրել լուծման երկրորդ և կարճ եղանակները: Աշակերտների հիշողության մեջ մնացել են ընկեր Միրզոյանի բացատրած թեորենների ոչ միայն զբաղմունքի և սպասույցները, այլ նաև՝ գիտականը: Նա կարողացել է լեզու գտնել բոլոր աշակերտների հետ՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները: Դասը, հագեցած լինելով մնայուն գիտելիքներով, առանձնանում է յուրահատուկ աշխույժությամբ: Ամենադժվար հասկացողի համար ընկեր Միրզոյանն ունի բացատրելու իր տարբերակը: Ծնորհիվ արհեստավարժության՝ նա զարգացնում է աշակերտների տրամաբանությունը, լայնացնում աշխարհայացքը, կարգի բերում աշակերտի միտքը՝ ստեղծելով ներքին ներդաշնակություն:

Շոշի Ս. Աբրահամյանի անվան միջնակարգ
դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԴԵՊՈՒՄԱՆՅԱՆԻ 150-ԱՄՅԱԿ

ԲՈՒՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԻՄԱՍՏՈՒՆ ԱՅՐԸ



Ամենակին պարզ խնդիր չէ Գովհաննես Թումանյանի տեղի, դերի և նշանակության գնահատությունը: Ասել «Չայ մեծ գրող», «Չայ մեծ բանաստեղծ», «Չայոց ազգային հանճար»՝ նշանակում է ոչինչ չասել, որովհետև Գովհաննես Թումանյան անուն-ազգանունն ավելին է, քան այդ բնորոշումները միասին վերցրած, և իր մեջ ավելի շատ գրական, մշակութային, ազգային ու լեզվական տեղեկատվություն է պարունակում, քան նրան տրված այդ թեև բարձր, բայց, ըստ էության, նաև անբողջապես չընդգրկող գնահատություններն են:

Դավիթ ՊԱՄՊՐՅԱՆ

ու տառապանքով շաղախված: Աշխարհ, որտեղ մտնում ես կանչով ու կոչով էլ չես ուզում դուրս գալ, քանզի իմաստությունից զատ այլ բան չես գտնում այնտեղ: Սա Թումանյանի անհորիզոն աշխարհն է, որ անհագորեն կլանում է քեզ, տանում հեռու-հեռու հորիզոններ, «էն մութ ծորերը», ուր ծով վշտի մեջ մեռնում է փոքրիկ Մարոն, մարդ դառնալու, աշխատանք անելու համար քաղաք է գնում անչափահաս Փիքորը, ուր կործանվում է սիրած տղային խելքամաղ անող, անաստված Անուշի և իգիթ Սարոյի մեծ սերը, ծորն է գլորվում ածաղախ խելագար Սաթոն, ուր լուռ չարչարանքով հառաչում ու անհրաժեշտ աշխարհի դեմ ծառս է լինում Ծերունին, ուր հուսահատ աղքատության մեջ մահունկները լալիս են քաղցից, հաց են ուզում մայրիկից, ուր գյուղի անբախտ հայրերն ու պապերն օրհնում են իրենց գավակներին, որ իրենց պես չապրեն, ուր գյուղացին պատմում է իր ծանր կյանքի ու առօրյայի մասին՝ վիշտը կիսելով գութանի ու եզան հետ... Զորիզոններ նաև, որ բացվում են ջալախական հրաշք բնության գրկում, ուր բնակվում են Թմուկ բերդի անասան ու անպարտելի Թաթուլ իշխանն ու ամրոցի սևաչյա մատնիչ Տիրուհին, Փարվանա արքայադուստրը, որ երագում է ու սպասում այն քաջին, ով կբերի անշեջ հուրը իր սրտի... ուր տեղահան արված գերի ծերունին փռվում է գետնին, քանի որ երկրի վրա կա շահ ու գերի, սարուկ ու տեր...:

Ամեն տարիք ունի իր տպավորիչ ու մնայուն Թումանյանը՝ իր հանճարեղ ու բարի ժպիտով: Մի՞թե նա երբևէ կարող էր մտածել, որ հենց դրա մեջ է իր հավերժական կերպարը, իր դարահողով փառքը, որի ետևից նա չվազեց. փառքը հետապնդեց նրան:

Չուր եմ փախչում, ինձ խաբում,
Հազար կապ է ինձ կապում.
Ամենքի հետ ապրում եմ,
Ամենքի չափ տառապում:

Կյանքի անցողիկությունը նկատի ունենալով ու միշտ կյանքին սիրահարված լինելով՝ մեծ գրողը՝ հանճարի կրողը, պատգամ է հղել մարդուն.

Չե՛յ, ազախ մարդ, ին՛չ, անգոհ մարդ,
միտքդ երկար, կյանքդ կարճ,
Քանի՞-քանիսն անցան քեզ պես, քեզ-ցից առաջ, քո առաջ.
Ի՛նչ եմ տարել նրանք կյանքից, թե ի՛նչ տանես դու քեզ հետ,
խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան ես ճամփեր:

Կյանքի վերջին տարիներին գրողի անձնական ցավերը համընկան իր ժողովրդի անձնաողբերգական անցքերի հետ, որի հետևանքով ծնվեցին բազում թախտոտ ու մռայլ շեշտեր ունեցող տողեր: Չնայած այս ամենին, դրանցում տիրապետող թունամյանական անհուն լավատեսությունն է, նրա մարդասիրական ու խոր հոգին.

Էնքան շատ են ցավերն, ավերն իմ սրտում,
Էնքան անթիվ կորած լավերն իմ սրտում...
Չեմ էլ հիշում չար ու խավար ես ծամին՝
Երբ են փայլել ուրախ օրերն իմ սրտում:
Նրան հաջողվեց մեծ վարպետու-

թյամբ հանճարի գրչով բյուրեղացնել մեր ժողովրդի անխառն հոգին ու նվիրական երազանքները:

Ամձնական ապրումների միջոցով հանճարի ուժով արտահայտելով համամարդկային տրամադրություններ՝ Թումանյանը շարունակում է քայլել բոլոր ժամանակների սերունդների հետ՝ պարզաբան լուրջ հոգու բյուրեղյա մաքրություն, տիեզերական անսահմանություն, գեղեցիկ, լուսավոր ու անխաղախ երազներ միտված ապագային:

Այսպիսին է մեր Թումանյանը, համամարդկային Թումանյանը:

Որ նա իր երկերով հավերժացնում է, վերջերս համոզվեցինք Ստեփանակերտի Վրթ. Փափագյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանների ուժերով կազմակերպված «Լուսվա ծորերում» ներկայացումը դիտելով: Այն նվիրված էր մեծ բանաստեղծի ծննդյան 150-ամյակին: Իսկապես, երբեք հնարավոր չէ հոգնել, ծանծաղանալ Թումանյանից: Դերասանական կազմը բազմաթիվ է, ինչպես Մեծ Լոռեցու ժառանգությունը: Հանդես էին գալիս կյանքի բոլոր փուլերը՝ ներկայացնող դերասաններ, որոնց բնական խաղերից ծնվում էր մի նոր համանվագ, մի նոր, միշտ նոր ու թարմ Թումանյան: Դահլիճը հանդիսատեսի պակաս չէր զգացել: Մեկ ունկնդիրն էինք մանկական պարզ ու անխառն խայտանքների, մեկ՝ երիտասարդական հախուռն տվայտանքների, մեկ՝ հասուն մարդու խոր փիլիսոփայության:

Թատրոնի ռեժիսոր Ռուզան Խաչատրյանի՝ յուրահատուկ լուծումներով նոր սցենարը կրկին հուզեց հանդիսատեսին՝ նորովի բացահայտելով ժողովրդական բառ ու բանի անսպասելի անկողնից սնված և ժողովրդին նոր ու իմաստուն մեկնաբանություններով վարձահատույց եղած Ամենայն հայոց բանաստեղծին:

Միակ ցավոտ հարցը, որ այսօր անհնազանդանում է ոչ միայն դերասաններին, այլև թատերասեր հասարակությանը, այն է, որ այսքան դանդաղում է թատրոնի շենքի վերակառուցման գործընթացը: Դերասանները շատ անգամ ստիպված են լինում ներկայացումները կազմակերպել ոչ պատշաճ հարմարություններով, ինչից, բնական է, սուտեմ է արվեստը: Հուսանք, որ շուտով մեծ ու հարմար բեմը կլինի թատրոնին նվիրված դերասանների հիմնական աշխատավայրը: Մեր հանդիսատեսն էլ միշտ երախտագիտությամբ կընդունի թատրոնի նվիրյալների խաղը:

Այսպես միշտ ապրելու է Մեծն Լոռեցին, հար ու հավիտյան, ինչպես Լոռու հրաշագեղ աշխարհը: Մենք էլ՝ ապրողներս, միշտ հոգիներին ծարավը հագեցնելու ենք Թումանյանի անսպասելի աղբյուրի ջրով, որ նոր լիցք ու թափ է հաղորդում մեր մտքին ու սրտին:

Ինչքան դիպուկ տողեր է ձոնել Գևորգ Գրիգը Մեծն Թումանյանին.

Չայոց երկրի մեծ արվեստի Մասինս էր նա,
Դարեր կանցնեն ու անասան նա կմնա:
Չայոց երկրի վառ ծաղկունքի պսակն էր նա,
Դարեր կանցնեն, բուրմունքն անուշ չի հնանա:
Չայոց երկրի ալպտուսիկ սոխակն էր նա,
Դարեր կանցնեն, բուրմունքն անուշ չի հնանա:

Քանի գնա, երզը նրա կբաղցրանա...
Իսկ հանճարեղ Պարույր Սևակն էլ այսպես է բնութագրել նրան. «Թումանյանը հենց նա է, ուն հետ ենք մենք ամենքս կամա թե ակամա, գիտությամբ թե անգիտությամբ: Հետն ենք ամբողջ կյանքներումս՝ տակավին գրաճանաչ չդարձած և մինչև մահվան մահիճ: Հետն ենք առավել, քան որևէ մեկ այլ գրողի»:

Սուրբայա ՂԱԶՐՅԱՆ

Խոսք հիշատակի
...ԻՍԿ ԿՅԱՆՔԸ ՊԻՏԻ՝
ՇԱՐՈՒՆԱԿՎԻ



Բոլորովին պատահականորեն իմացա, որ իմ ընկերներից մեկը՝ Գուրգեն Չայրապետյանը, ստեղծագործում է: Դեռևս Կենտրոնական պաշտպանական շրջանում մեր համատեղ ծառայության տարիներին եմ նկատել նրա համակրանքը գրական ստեղծագործության ու ստեղծագործողների նկատմամբ: Բայց որ ինքն էլ էր մեկ-մեկ գրական փորձեր անում՝ բոլորովին չէմ կասկածել: Առիթն ինքնին ներկայացավ, ու այլևս նպատակահարմար չգտավ թաքցնել: Չանգեց, ամաչկոտ-ամաչկոտ, թե՛

- Մի քանի բանաստեղծություններ են ուղարկել «Ստեփանակերտ» թերթի խմբագրությանը: Մի երկու ամիս կլինի՝ դեռ չեն տպագրվել, անհարմար են զգում զանգել, տեղեկանալ...

- Բանաստեղծություն, անակնկալ էր ինձ համար, բայց և հասկանալի՝ սկսնակի ամոթխածության զգացումը: Խոստացա հետաքրքրվել: Չանգեցի խմբագրություն: Գլխավոր խմբագիր Անահիտ Քոչարյանը ոչ միայն հաստատեց փաստը, այլ, որ ավելի հետաքրքիր էր ինձ համար, գովեց հեղինակին՝ խոստանալով տպագրել առաջիկա համարում: Համարը չուշացավ: Կարդացի, հավանեցի, խրախուսեցի: Առաջին տպագրված բանաստեղծություններին հետևեցին հաջորդ հրատարակումները «Ստեփանակերտ», «Մարտիկ», «Ակունք» և այլ թերթերում, տպագրեց նաև բանաստեղծական ժողովածուներ...

...Մեր համահայկական ցավը միացրեց հայության բոլոր հատվածներին: Արցախյան շարժման ու զինված ընդհարման ընթացքում արթնջանցիների բռնությունների հետևանքով շատ արցախցիներ հյուրընկալվեցին Չայաստանում, Ռուսաստանի հայաշատ վայրերում, հայտնվեցին աշխարհի ամենատարբեր երկրներում: Իսկ Սպիտակի երկրաշարժի ահասարսուռ օրերին, մութ ու մահով շրջապատված, բայց ոգով տոկուն Արցախը և հանդես եկավ հյուրընկալողի դերում: Շատերի հետ Գոհար Չարուբունյանը և Ստեփանակերտ եկավ Լեռնական (այժմ՝ Գյումրի) հրաշալի, բայց կիսակործան քաղաքից՝ 1988-ին: Հանդիպեց ու ամուսնացավ ստեփանակերտցի հրաշալի մարդ ու սրտամոտ ընկեր, ազնվության ու բարության տիպար Գուրգեն Չայրապետյանի հետ, կազմեց համերաշխ ընտանիք: Ու մինչև 2018-ն ապրեց և աշխատեց Ստեփանակերտում:

Քաղաքի հ. 4 դպրոցում Գոհար Չարուբունյանը կրթեց ու դաստիարակեց նոր սերունդին՝ ակտիվորեն մասնակցելով ներդասարանական ու ներդասարանական բոլոր աշխատանքներին, անցավ վաստակած հանգստի: Բայց վաստակած հանգիստը վայելել չկարողացավ. ծանր ու շարունակական բնույթ կրող հիվանդությունը չթողեց:

...Գուրգենի և Գոհարի ընտանեկան խնջույքներին միշտ ներկա էինք ես ու Ռուզանը, Գուրգենի որդին՝ Գագիկը, հարսը՝ Աբսաման, թոռները, Գոհարի աշխատանքային ընկերները: Տոնական սեղանը զարդարում էին ոչ միայն բազմատեսակ ուտեստներն ու ըմպելիքները, նաև՝ ասունընթաց, որն իրենց վրա էին վերցնում Ռուզանը ու Գուրգենը: Գուրգենն արտասանում էր ոչ միայն Սահյան ու Տերյան, նաև՝ իր բանաստեղծություններից, իսկ Գոհարը, օգտագործելով բանաստեղծի իր մասնագիտությունը, անհրաժեշտ դիտողություններ, ճշտում-լրացումներ էր անում ամուսնու բանաստեղծություն:

Այս ամենը, ցավոք, արդեն անցյալ է՝ ճակատագրի քմահաճությամբ: 2018-ը մեզանց հեռացրեց մի պայծառ ամուսն ևս. դեկտեմբերի 21-ին տիկին Գոհարը հրաժեշտ տվեց երկրային կյանքին: Դժվար է, իհարկե, հավատալ ու համակերպվել մահն փաստի հետ: Անագորույն մահը վերջնականորեն ընդհատեց մի համեստ ու հետաքրքիր կյանք:

Գուրգենը ծանր է տանում այս կորուստը, խոսելիս փղծկում է:

Համբերություն քեզ, իմ բարեկամ, իմ ընկեր: Պինդ եղիր ոգով ավելի: Գիտեմ, որ չի կիսվում այդ ցավ կոչվածը: Գիտեմ, որ ինչ էլ ասեն՝ չի թեթևանում մտատանջությունը: Բայց ամեն դեպքում ընդունված կարգ է վիշտը կիսելը: Քեզ՝ ոգու կրողը: Շարունակիր ապրել և՛ հանուն քեզ, և՛ հանուն Գոհարի: Մենք պիտի շարունակենք ապրել մեր միասին անցկացրած օրերով, միասին ապրած կյանքով: Մեր հանդիպումներն անպայման ու կրկին պիտի շարունակվեն: Խնջույքի առաջին կենացով կհարգենք տիկին Գոհարի հիշատակը, ու կշարունակվի ասունընթացի երեկոն: Իհարկե, մի ձայն պակաս կլինի մեր բազմաձայն հավաքություն, բայց նա միշտ կլինի մեզ հետ, մեր կողքին, մեզանց անբաժան:

Արիս ԱՐՄԵՆԻ

ՕՃԱՆՂԱԿ

ՄԵՂՐԻ ԲՈՒԺԻՉ ՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հին ժամանակներում մարդը մեղվից ստանում և օգտագործում էր երկու պրոդուկտ՝ մեղր և մոմ: Այժմ նա ստանում և օգտագործում է ևս չորսը՝ մեղվի թույն, մեղվաստսինձ (прополис, ակնամոմ), մայրական կաթ, ծաղկափոշի: Միայն դրանով չի սահմանափակվում նշված արժեքավոր և մարդուն անհրաժեշտ պրոդուկտների օգտագործումով հետաքրքրությունը դեպի մեղվաբուծություն:

Մեղվի դերն անգնահատելի է գյուղատնտեսության մեջ. ծաղիկների փոշոտումը մեղուներով բարձրացնում է բույսերի բերքատվությունը և բերքի որակը՝ համեմատած փոշոտման այլ եղանակների հետ: Առանց մեղուների ժողովրդական տնտեսությունը տարեկան կկորցնի միլիոնավոր տոննաներով միրգ-պտուղ և հացահատիկ: Առանց մեղուների փոշոտման բնությունը կկորցնի էկոլոգիական հավասարակշռությունը: Առանց մեղուների հազարավոր տոննաներով նեկտար ամեն տարի ապարդյուն կկորչի, քանի որ մարդն ի վիճակի չէ այն հավաքել, բացի դրանից, մարդիկ իրենց ազատ ժամանակը ծախսում են այս զբաղմունքի վրա՝ ամրապնդելով իրենց առողջությունը:

Չի կարելի մոռանալ այն փաստը, որ մարդը արիեստականորեն չի կարող հայտնաբերել մեղվի և ոչ մի պրոդուկտ: Մեղվի պրոդուկտներն անհրաժեշտ են մարդուն՝ որպես սնող, դիետիկ և կոսմետիկ միջոցներ:

Այժմ խոսենք մեղրի բուժիչ հատկությունների մասին:

Ժողովրդական բժշկությունը մեղրը դեռ հնում օգտագործում էր որպես մրսածության և վերին շնչառական ուղիների բուժման օժանդակ միջոց: Լայն տարածում է ստացել մեղրի կիրառությունը ուրիշ դեղերի հետ համատեղ՝ մրսածության հետևանքով հիվանդությունների բուժման ժամանակ:

Մեղրը տաք կաթի հետ. մեկ ճաշի գդալ մեղրը՝ մեկ բաժակ կաթին:

Մեղրը լիմոնի հետ. 100գ մեղրը՝ մեկ լիմոնի հյութի հետ: Մեղրը տաք թեյով և այլն: Մեղրը որպես դեղ ընդունելիս անհրաժեշտ է պահպանել երկու-երեք օր անկողնային կամ տնային ռեժիմ, որովհետև մեղր ընդունելիս քրտնաթորություն է առաջանում: Վերին շնչառական կատարի բուժման դեպքում լավ արդյունք է տալիս մեղրի ջրային զոլոչիններով ինհալացիան: Ինհալացիան կարելի է կատարել և տնային պայմաններում: Շոգային ինհալացիայի դեր կարող է կատարել սովորական թեյնիկը, որի թթին ամրացված է ռեզինե խողովակ, իսկ խողովակի մյուս ծայրին միացված է ապակե կամ պլաստ-

մասե փոքրիկ ձագար: Երբ թեյնիկի ջուրը սկսում է եռալ, նրա մեջ ենք լցնում երկու սուրճի գավաթ մեղր (200մլ): Թողնել, որ մեղրով լուծույթը կրակի վրա դանդաղ եռա: Բավական է, որ հիվանդը մոտ 15-20 րոպե շնչի ձագարից: Այս մեթոդը լավ արդյունք է տալիս բրոնխների խրոնիկ հիվանդության և նույնիսկ ասթմայի դեպքում: Դրան զուգահեռ՝ օրական պետք է օգտագործել 60-100 մեղր, ոչ թե կուլ տալ, այլ բերանի խոռոչում դանդաղ ծծելով կուլ տալ: Այստեղ հարմար է օգտագործել բյուրեղացած մեղրը: Այն շարունակել 20 օր: Այստեղ բարձրանում է թոքերի ֆունկցիոնալ գործունեությունը:

Լայն էֆեկտ են տալիս մեղրն ակնամոմի և մեղրը մայրական



կաթի հետ ինհալացիաները, առանձնապես՝ երեխաների շրջանում:

Մեղրը հնուց կիրառում են ստամոքսային և տասներկու մատնյա աղիքի գաստրիտային խոցային հիվանդությունների բուժման գործում: Ամենալավ էֆեկտը տալիս է միայն մեղրով բուժումը՝ չկիրառելով այլ պրեպարատներ: Այս մեթոդը հնարավորություն է տալիս խոցի առողջացմանը, այսինքն՝ խոցն անհետանում է:

Ստամոքսի բարձր թթվայնության դեպքում 30-40 գրամ մեղրը խառնել մեկ բաժակ տաք ջրի (30-40°C) մեջ և խմել օրական երեք անգամ՝ ուտելուց մեկուկես կամ 2 ժամ առաջ կամ 3 ժամ հետո:

Ստամոքսի ցածր թթվայնության դեպքում մեղրն օգտագործել նույն դոզայով սառը վիճակում՝ մինչև սնունդն ընդունելը 1,5-2 ժամ առաջ (հիշեք, ոչ մի դեպքում՝ ուտելուց հետո):

Այս նույնը կարելի է կիրառել նաև թուրքի բուժման ժամանակ:

Անքնության ժամանակ բավական է քնելուց առաջ օգտագործել մեկ բաժակ տաք ջրի մեջ լուծված թեյի գդալով մեղրի լուծույթը: Չկա դրանից ավելի անվտանգ քնաբեր միջոց:

Մեղրը լավ դիետիկ սնունդ է լյարդը հիվանդանալու դեպքում: Սպիտակուցներով հարուստ

մեղրը ոչ միայն հարստացնում է գլիկոգենը լյարդում, այլ նաև ուժեղացնում է նրա պաշտպանիչ-բարիերային ֆունկցիան. արգելակում է բակտերիաների մուտքը և չեզոքացնում թունավոր նյութերի հոսքը օրգանիզմ:

Հազարամյակներ շարունակ մեղրը հաջողությամբ օգտագործել են վերքերի բուժման ժամանակ: Մեղրն օգտագործվում է այրվածքների բուժման նպատակով: Բավական է մեղրին խառնել մսաղացով քաշած կարտոֆիլի զանգվածը հավասար հարաբերությամբ և ստացված խառնուրդը դնել այրվածքի վրա: Մեղրն ակտիվացնում է վերքի վրա պաշտպանիչ լորձաշերտի անջատումը և վերքը պաշտպանում է կեղտոտումից ու արագորեն բուժում այն: Բերանի խոռոչի և

որով մեղուն պատրաստում է դեղորայքային պրեպարատ՝ մեղրի տեսքով: Այսպիսով, ստացվում է կիսավիտամինային, գազարային, արյունային, ժենշենային և այլ տիպի բուժիչ մեղր:

Ավելորդ չեն համարում հիշեցնել, որ բյուրեղացած մեղրը պետք է օգտագործել հենց այդպես, իսկ եթե հալեցնում եք, ապա վիտամինների կորստից խուսափելու համար հարկ է պահպանել հալման հետևյալ նորմերը (խուսափել մեղրի այրումից).

• Մեղրի տաքացումը չափցնի 60°C-ից բարձր ջերմաստիճանում:

• Մեղրի տաքացումից հետո աշխատել այն արագ սառեցնել:

• Տաքացման ընթացքում օգտագործել հերմետիկ անոթ՝ արոմատ նյութերի գոլորշիացումից կորուստը քաջացնելու:

• Մեղրը տաքացնել ֆիլտրացիայից հետո՝ մեղրի բույրը և համը չկորցնելու նպատակով:

• Չտաքացնել մեղրը, եթե դրա խիստ անհրաժեշտությունը չկա:

Եթե կա հալման անհրաժեշտություն, այն հալել փակ հերմետիկ ամանում՝ տեղավորելով տաքացվող ջրի մեջ և հետևելով, որ ջրի մակարդակը համընկնի անոթում եղած մեղրի մակարդակի հետ: Մեղրը հալվում է 60°C-ում: Սովորական պայմաններում մեղրը կարելի է պահել երկար, եթե սենյակի խոնավությունը պահվի մոտ 60%-80% 10°C-ից ցածր, չոր, մաքուր սենյակում: Մեղրը պետք է պահել ապակե, պլաստմասե կամ էմալապատ հերմետիկ փակված ամանում: Չի կարելի մեղրը պահել սուր հոտ ունեցող մթերքների մոտ, այլապես այն կորցնում է որակը: Մեղրահացը նույնպես պահում են նույն պայմաններում՝ միայն այն փաթաթելով ցելոֆանե թղթի մեջ: Մեղրով թխվածքների պարտաստման ժամանակ ջեռուցիչի ջերմաստիճանը չպետք է անցնի 169°-176°C սանդղակից, որովհետև դրանից բարձր ջերմաստիճանում գլյուկոզն և ֆրուկտոզան փոխում են գույնը և համն ու հոտը:

Մեղրի օգտագործումը բարերար ազդեցություն է թողնում սրտամկանի վրա, քանի որ մեղրը պարունակում է մեծ քանակությամբ հեշտ յուրացվող գլյուկոզ: Սրտային տարբեր հիվանդությունների ժամանակ մեղրը թանկարժեք ծառայություն է մատուցում թուլացած սրտամկանին: Այդ միջոցից չպետք է հրաժարվել նույնիսկ շաքարախտով հիվանդանալու դեպքում, քանի որ օրգանիզմ ֆրուկտոզ կամ մեղր ներմուծելիս սրտի գործունեությունը բարելավվում է: Օրական (1-2 ամիս) 50-140 գրամ (միջին հաշվով՝ 70 գրամ) ուտելու դեպքում ծանր սրտային

հիվանդների մոտ սրտանոթային տոնուսի բարձրացման դրական միտում է նկատվում:

Մեղրի արդյունավետությունը երկվամային հիվանդությունների ժամանակ բացատրվում է նրանով, որ մեղրը շատ քիչ սպիտակուց է պարունակում, գրեթե զուրկ է աղից՝ երկու նյութ, որ հակացուցված են երկվամային հիվանդությունների ժամանակ: Խորհուրդ կտայի օգտագործել մեղրի հետ մատուրի թեյ (15գ՝ 0,5 լ ջրին), բողկի հյութ (օրը 0,5-1 բաժակ):

Մեղրը հիանալի միջոց է աչքի բորբոքային վիճակների ժամանակ: Բավական է 4-5 օր բորբոքված աչքը բուժել՝ տաք մեղրի կաթիլ մտցնելով կոպերի տակ: Խորհուրդ կտայի այս մեթոդը կիրառել միայն ու միայն բժշկի թույլտվությունից հետո:

• Երեք թեյի գդալ դարչինը և 2 ճաշի գդալ մեղրը լավ խառնել և օրվա ընթացքում գոլ ջրի մեջ խառնելով՝ օգտագործել օրվա ընթացքում: Միստեմատիկ օգտագործելով՝ իջնում է անոթներում խոլեստերինի քանակը:

• Սրտանոթային խնդիրների դեմ պայքարելու միջոց է մեղրի և դարչինի (3 թեյի գդալ դարչին և 2 ճաշի գդալ մեղր) խառնուրդով պատրաստած ջեմը. քսել մի կտոր հացի վրա և օգտագործել առավոտները նախաճաշի ժամանակ:

• Մեկ բաժակ գոլ ջուր, մեկ թեյի գդալ մեղր և երկու ճաշի գդալ դարչին խառնել իրար հետ և օգտագործել օրվա մեջ միզապարկի հիվանդությունների դեմ:

• Մազաթափության և պզուկների դեմ պայքարելու հուսալի միջոց է մեղրի և դարչինի խառնուրդը (3 ճաշի գդալ մեղր և մեկ թեյի գդալ դարչին): Քսուկը քսել պզուկների վրա և թողնել, որ մնա ողջ գիշերը, առավոտյան լվանալ և կրկնել 2 շաբաթ:

Մեղրի վանճանները (200-250 գ մեղր՝ մեկ վանճային) պրոֆեսիոնալ ազդեցություն է թողնում մաշկի և ողջ օրգանիզմի վրա: Մեղրի վանճայինց հետո խրախուսվում է հիպոսթիկ ցնցուղ ընդունել:

Մեղրի օրական դոզան մեծահասակների համար բուժիչ նպատակով՝ 100գ միջին հաշվով, ընդ որում, առավոտյան 30գ, կեսօրին՝ 40գ., երեկոյան՝ 30գ: Մեղրը պետք է ընդունել 1-2 ամսվա ընթացքում 1,5-2 ժամ ուտելուց առաջ կամ ուտելուց 3 ժամ հետո: Երեխաներին մեղրը պետք է տալ թեյի գդալով՝ օրական 30 գ, միայն ու միայն բժշկի թույլտվությունից հետո:

Շահեն ՄԱՐԳԱՐՅԱՆ
Մանկավարժ-մեղվաբույժ,
ԱՀ վաստակավոր
ուսուցիչ

ՊԱՏՊԱՆԱԽՈՍ

ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳԻՏՆԱԿԱՆ-ԳԵՂԱԳԵՏՈՒ



ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ: Մարդ, գիտնական, գյուտարար, բանաստեղծ, դրամատուրգ, բեմադրիչ, դերասան, բարերար, անչափ հետաքրքիր, ինչպես ինքն է սիրում ասել, «ամենություն», ով արցախցի արվեստասերների համար ընդմիջտ կմնա որպես Մեծ Հայքի՝ խրիմյան Հայրիկի պատգամախոսը:

Սփյուռքահայ գրող Հրանտ Մարգարյանը անցած ամառ Համազգային հայ կրթական և մշակութային միության Արցախի գրասենյակի հրավերով հերթական այցով Արցախում էր: Նա մայրաքաղաքի թատերասերներին ներկայացավ «Խրիմյան Հայրիկ» մենամենակալացմամբ, որի թե՛ հեղինակն ու թե՛ մարդիկը, թե՛ գլխավոր դերակատարն ինքն էր: Ուղեցույց ունենալով Սկրտիչ խրիմյանի միտքը՝ «Թատրոնը եկեղեցի է, անհկա տեսակ մը տաճար է մարդկային բարքերը կռելու և հոգին բարձրացնելու համար», հեղինակը ստեղծել է բարձրարժեք մի գործ, որում սիրված հոգևոր առաջնորդի շուրթերով ներկա սերնդին է փոխանցում մեր կեցության ու գոյի հավերժության հիմք-պատգամը, մեր լինելության «բառաբան»-ն՝ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ, ՀԱՎԱՍՏԵ, ՄՇԱԿՈՒՅԹ, ԸՆՏԱՆԻԹ...

Ներկայացումը շրջել է աշխարհի հայաշատ վայրերով և որտեղ էլ խաղացվել է, ողջ հասույթը հեղինակը տրամադրել է «Հայ բժիշկների հիմնադրամին», որի անդամ է նաև ինքը: Այդ գունավոր կոնկրետ նպատակի է ծառայել՝ Արցախի ՊԲ-ի համար հատուկ սարքերի գնմանը, որոնք կանցնում են վիրավոր զինվորի արյունահոսությունը: ՀՀ-ի անդամ Հ. Մարգարյանը բազմիցս եղել է Արցախում և միշտ էլ՝ ազգանպաստ ձեռնարկումներով: Մենամենակալացումը նրա հերթական ցավերն էր արցախցիների՝ արված Հայաստանի Առաջին Հանրապետության 100-ամյակի և Համազգային հայ կրթական և մշակութային միության հիմնադրման 90-րդ տարեդարձի առիթով: Հայաստանում և սփյուռքում բարձր են գնահատել նրա ազգաշահ գործունեությունը՝ արժանացնելով տարբեր պարգևների:

Խրիմյան Հայրիկի հանդեպ սերը, խորագույն հարգանքը նրա մոտ փոքր տարիքից է, իսկ գեղարվեստական խտացումը ծնվել է 1987-ին՝ մահվան 80-ամյակին, երբ Նյու Յորքում ամբողջական թատերախաղ գրեց՝ նրա կյանքի դրվագներից հյուսված: Այն մի քանի տարի Նյու Յորքում, Գլենդեյլում, Բոստոնում, Դեթրոյթում և հայաշատ այլ քաղաքներում հանդիսատեսին

է ներկայացվել 36 հոգանոց խմբով: Վերջերս հերթական տարեկիցի առթիվ նա որոշեց նորից բեմ բարձրացնել Մեծ Հայքի ներկայարը, այս անգամ՝ մենամենակալացմամբ, որովհետև դժվար է Նյու Յորքից դուրս շրջագայել գրեթե չորս տասնյակի հասնող թատերախմբի հետ: Խոստովանում է՝ մեծ գոլուշավորությամբ է մոտեցել այդ հսկա տիպարին, որովհետև նրա խոսքի և գործի մեջ արատավոր ոչինչ չկար, «պաշտելի մեկն էր, ինչպես և է՛, ինձի համար խրիմյան ուրիշ է»: Եվ պատահական չէ, որ մեր ամբողջ պատմության մեջ ժողովուրդը միայն մեկ հոգու է Հայրիկի պատվավունով մեծարել. «Ս. Լուսավորչին Հայրիկ չենք ասել, Սահակին, Մեսրոպին չենք ասել, մեծերից ուրիշ մեկին չենք ասել, միայն մեկին փոխանցեցինք և՛ արժանիորեն»:

Թատերերը գրելուց առաջ հեղինակը ուսումնասիրել է խրիմյան Հայրիկի ողջ կյանքն ու գործը՝ սկսած արխիվային փաստաթղթերից մինչև ժամանակակիցների հուշերն ու վկայությունները. «Արխիվները մեծ դեր ունեցան, մինչ այդ տարբեր գրքեր էի կարդացել, ուսումնասիրել: Արխիվում կարդացի խրիմյանի ողջ նամակագրությունը: Անցյալ տարի Արցախի հոգևոր կյանքի մասին գիրք է լույս տեսել, որն ընդգրկում է 1670-1917 թթ. շրջանը: Գրքում 1852-1906 թթ. Արցախի տարբեր եկեղեցիներից ու վանքերից նամակագրություն կա, որտեղ եկեղեցականներն իրենց բողոքները, խնդիրները և այլ հարցեր են ներկայացրել: Դա նորություն էր ինձ համար. դեռ արխիվներ կան, որոնք պետք է պեղել: Մինչև կաթողիկոս դառնալը խրիմյանն այցելել է Շուշի, որտեղ մնացել է մի քանի օր, ապա անցել է Պարսկաստան, որտեղ հյուրընկալվել է վիպասան Բաֆֆու տանը: Արխիվում նույնիսկ պահպանվել է արցախյան մի գյուղից ուղարկված նամակ, որում գյուղացիները հայտնում են, որ փող են հավաքել, ուզում են դպրոց բացել»:

Հրանտ Մարգարյանը հանդիսատեսին ներկայացրեց Հայրիկի գործունեության կարևոր դրվագները՝ ներխուժելով դրանք հայ ժողովրդի պատմության ճակատագրական հատվածներին: Նրան հաջողվել է ստեղծել կենդանի մի տիպար, այնքան իրական, որ հանդիսատեսին մոռացնել էր տալիս կերպար-դերակատար սահմանը: 90-ամյա դերասանն ավելի քան մի ամբողջ ժամ նվաճել էր ողջ դահլիճը, գրավել հանդիսատեսի ուշքը ու միտքը: Այնքան բնական ու անմիջական էր նրա խաղը, խոսքը, շփումը հանդիսատեսի հետ, ասես բեմում կանգնած պատկառելի այրը հենց ինքը՝ սիրված կաթողիկոսն էր: Նա գերազանցել է իր առջև դրված խնդիրը. «Բեմը մի հարթակ է, ուր արտացոլվում է կյանքի մեկ պատկերը, սակայն հաջողությունը պայմանավորված է նրանով, որ խաղը բեմից վայր իջնի, այդ չորրորդ պատը բեմի ու հանդիսատեսի միջև չքանա: Եթե այդ հաղորդակցությունը չկա, ուրեմն ներկայացումը չի կայացել»: Հանդիսատեսն ընդունել է նրա կերպարարարումը. «Պատահել է՝ խաղից հետո հոգևորական-

ներ են մոտեցել՝ ձեռքս համբուրելու: Ես ընդդիմացել եմ՝ ասելով. «Ես խրիմյանը չեմ», բայց այնքան մեծ է եղել մարմնավորած տիպարի ազդեցությունը, որ նրանք նույնացրել են մեզ»:

Նա վստահեցնում էր, որ խրիմյանը այժմեական է ամեն ինչով: Ներկայացման մեխը Հայրիկի «երկաթե շերտի» քարոզն էր, քանզի նա քաջ գիտակցում էր, որ առանց զենքի ազգին փրկություն չկա: Սա արդիական է բոլոր ժամանակների համար՝ անցյալ, ներկա ու ապագա: Հայության գերխնդիրը Արցախը համարող ամերիկահայ մտավորականը համոզված է, որ յուրաքանչյուր հայ, աշխարհի որ ծայրում էլ բնակվելիս լինի, պիտի իր լուծման ներդրի այդ խնդրի լուծման գործում. «Հեռու չզգանք. Արխիմյան պատերազմի ժամանակ 106 զինվոր կորցրինք. նրանցից 26-ը չէր մեռնի, եթե արյան հոսքը կանցնող սարք ունենայինք: Բարեբախտաբար, Ամերիկայում երկու հոգի կարողացան կազմակերպել և այդ սարքերը հատկացնել մեր զինվորներին: Աշխարհում մինչ այսօր այդ սարքերից միայն Ամերիկան ու Իսրայելը ունենին, իսկ հիմա նաև Արցախն ունի. մենք երրորդն ենք: Այդ երիտասարդները դիմեցին տարբեր կազմակերպությունների, հանգանակություն կազմակերպեցին, որպեսզի այդ սարքերը հասցնեն սահմանապահ զինվորներին: Ես այդ բժշկական կազմակերպության անդամ եմ, որը հսկա ներդրում արեց և, հուրախություն բոլորինս, այսօր հայարտությանը են ասում, որ մեր դիրքապահ բոլոր զինվորները 100 տոկոսով ապահովված են այդ սարքերով»: Ավելին՝ նախանցյալ տարի, որպես այդ բժշկական կազմակերպության անդամ, նա եկել էր Արցախ, այցելել զորամասեր՝ տեսնելու, թե ինչպես են այդ սարքերն օգտագործվում մեր զինվորների կողմից և գոհունակությամբ փաստում է, որ բանիմաց, շնորհքով տղաներ ունենք:

Խրիմյան Հայրիկի ունեցած նրա պաշտամունքի ակունքը երկի թե նաև նույն՝ Վասպուրական աշխարհի զավակ լինելու մեջ պիտի որոնել. երկունս էլ վանեցի են: Կենսագրական ընդհանուր զուգահեռներն ավելի սերտ են դարձրել երկու սիրելի հերոսի հետ: Մեծ եղեռնից մազապուրծ նրա ծնողները հանգրվանել էին Իրաքում, որտեղ էլ ծնվել է Հրանտը. «Մայրս իր ամբողջ կյանքում այն տոհմական կինն էր, որ պահել էր երգի սովորությունները, Վանի բարբառը: Իսկ հայրս իր պապենական հողից երեք բան է կարողացել իր հետ տանել՝ մոր մկրատը, մոր հյուսած ջվալը և իրենց տան վավերական թղթերը: Այդ թղթերը են շրջանակի մեջ են դրել և կախել իմ տան պատին: Երբ դռնից դուրս եմ գալիս, առաջինը նրանց են նայում՝ իմ պապենական հողերի, կավածքների սեփականությանը»: Հարցիս՝ հավատո՞ւմ է վերադարձին, վստահեցրեց. «Անպայման: Մի օր անպայման, անպայման... Ես չտեսնեմ՝ իմ թոռները, ծոռները կամ նրանց թոռներն ու ծոռները պիտի տեսնեմ: ...Ես երեք անգամ այցելել եմ Արևմտյան Հայաստան, զննել եմ հորս գյուղը,

հորս այգու մեջ նստել եմ: Թուրքերը եկան, քովս նստեցին, թեյ հյուրասիրեցին, չխմեցի, ասացի՝ չեմ կարող, ես հորս գյուղում եմ, հորս այգուս եմ, չեմ կարող խմել... Հարցրին՝ հարա՞մ է, ասացի՝ չէ, բայց չեմ կարող խմել... Հաջորդ այցին նրան հաջողվել է գտնել եկեղեցին, որտեղ հայրը կրթություն է ստացել, թեպետ եկեղեցուց միայն խորանի մի փոքրիկ մասն էր պահպանվել: Իր ապրած-զգացածը նա ամբողջացրել է «Քառաձայն պատարագ» գրքում:

Գրչի հետ մտերմությունը ծնվել է ութ տարեկանից և շարունակվել ողջ կյանքի ընթացքում: Մասնագիտությամբ քիմիկոս է՝ միջուկային քիմիայի դոկտոր, նախ՝ Նյու Յորքի համալսարանի պրոֆեսոր էր, տարբեր կաճառներում հանդես է եկել գիտական թեմաներով դասախոսություններով: Գյուտերի հեղինակ է, որոնք արձանագրված են իր անունով (օրինակ՝ քրոմիոսի դեմ արտադրվող հոտազերծիչների՝ դեզոդորանտների մեջ մի կարևոր աղ կա, որ ինքն է հայտնագործել, երկրորդ գյուտը դեզոդորացի լուր-տից է. դեզոդորացի արագ լուծվելու միջոց է ստեղծել), գիտական թեզեր է գրել: Ոչ պակաս կարևոր մասնագիտություն է համարում թատրոնը. 27 թատերախաղերի, բանաստեղծությունների և արձակ գործերի ժողովածուների հեղինակ է, ավելի քան 60 բեմադրություն է արել, 70-ից ավելի դերակատարություն, գրական թեմաներով բանախոսություններ՝ աշխարհով մեկ՝ ամբողջ հայկական սփյուռքում և Հայաստանում: Հայաստանի և Արցախի գրողների միությունների անդամ է: Հատկանշական է, որ 90-ականների սկզբին Բրոդվեյում ներկայացում է դրել և ողջ հասույթը փոխանցել Արցախի գրողներին. ստեղծվել է գրական մի ժողովածու՝ «Արցախ. Դաժան սեր» գիրքը, որի տպագրական ծախսերն ինքն է հոգացել: 2018-ին Նյու Յորքի Համազգայինի գրադարանը երբ փակվեց (որովհետև չենք ըր վաճառվել էր), բոլոր գրքերը՝ շուրջ 1200 կտոր, բերել և նվիրել են Արցախին:

Հրանտ Մարգարյանի մեջ ներդաշնակ ապրում են գիտնականը, բանաստեղծը, դրամատուրգը, արձակագիրը, դերասանը: Խոստովանում է, որ գիտնականի՝ իրերի, երևույթների խորքային ընկալում ենթադրող ջիղն առաջնային է, քանի որ ուղեկցում է նաև իր մեջ ապրող գեղագետին. «Գիտնականը և գեղարվեստը միշտ մենամարտում են մեջս, որովհետև մեկը բանականությունն է, մյուսը՝ ազատությունը: Եթե կարողացար նրանց ներդաշնակությունն ապահովել, հաջողությունն ապահովված է»: Տաղանդավոր գիտնականի ու գեղագետի գործունեությունը վկայում է, որ նա հաջողությամբ համատեղում է բանականության ուժն ու երևակայության ազատությունը: Գեղագետի նրա հավատամքը Մարդն է՝ իր տառապանքներով, հույզերով և ուրախություններով, իսկ աղանդորդու հանապազօրյա աղոթքը՝ «Կաղոթեմ, Տեր, որ Մարդը չմահանա»...

Մեկանյա ՄԻՆՈՆՅԱՆ

Խոսք հիշատակի ՄԱՐԿ ԳԵՎՈՐԳԻ ՄԱՐԳՅԱՆ (ԹՈՎՄԱՍՅԱՆ)



2018թ. դեկտեմբերի 24-ին կյանքից հեռացավ մեր սիրելի գործընկեր Ծաղիկ Մարգարյանը: Մարդ, որն օժտված էր ամենաբարձր հատկանիշներով և իր բարի գործերով միշտ օրինակ է եղել շրջապատին: Ծաղիկը մեծ հարգանք վայելող, կշռադատված, բարեկիրթ, ժպիտը դեմքին անձնավորություն էր:

Ծ. Մարգարյանը 2006 թվականից աշխատել է ԱՀ Ծահույնյանի շրջանի Նոր Էրբեջի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի և մշտապես վայելել է մանկավարժական և աշակերտական կոլեկտիվների սերն ու հարգանքը:

Նոր Էրբեջի միջնակարգ դպրոցի մանկավարժական և աշակերտական կոլեկտիվները խորապես սգում են Ծաղիկ Մարգարյանի անժամանակ մահը, ցավակցում մեր գործընկեր, դպրոցի ուսումնական գծով տնօրենի տեղակալ Մելինե Մարգարյանին՝ սիրելի մայրիկի վաղաժամ մահվան կապակցությամբ և համբերություն մաղթում ընտանիքի մյուս անդամներին:

Սիրելի Ծաղիկ, դու մեզնից հեռացար ֆիզիկապես, բայց հոգով միշտ կմնաս մեզ հետ, միշտ կմնաս մեր հիշողություններում՝ որպես բարի սերնճացան...

Հիշատակդ հավերժ, սիրելի՛ գործընկեր:

Ծահույնյանի շրջանի Նոր Էրբեջի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՀԱՄԱՐԱՐ ՀԱՄԱԳՐԻ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info Մեքերունների և փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3100: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 26.01.2019թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: